

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 30 ՆՈՅԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 21

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մեր Դիրքը Հայց. Եկեղեցիին Հանդիպ

Տ. Ճ. Խ.

ՀՈԳԵԻՈՐ

Հոգր

ԹՐԳ. ՏԻԿ. Ե. ԲԷԹԵՆՃԵԱՆ

Բարեբաւ Տառապանք

(ՏՈՒԹ. Փ. Պ.)

Աստուծոյ Հաւատալ

(Ա. ՄԸՐԷՑ)

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Մայր Եկեղեցիի Հետ Միութիւն

ԲՐՈՅ. Յ. Ա. ՊԷՋՃԵԱՆ

Կորսուածին Տեղ

ՆԱՏԱՐՅԻ ԿՐՏՍԵՐ

Մեր Այլիքը

ԹՐԳ. Յ. Պ. ԱՊԱՃԵԱՆ

Նոր Բերնեզդա Մը

Ս. Գ. ՍԻԻԼԱՂԵԱՆ

Տնտեսական Նօթեր

ԲԱՂԵՑ՝ Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՁԱՆԻՑԻ ԷՁ

ՀԱՅ ԿԵՍՆՔ

NOR AVEDAPER

B. P. 287, ALEP, SYRIE

ՀԱՅԿԱՆ ԳՈՐԷՑ ԶԵԼԷՐ

1155 Բ. Է. Է. Է.

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, օտարեկան բաժնեգրին է 150 դրուշ սուրի. Սուրիոյ համար, և մէկ ու կէս տուար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

«ԿԵԱՆՔ ԵՒ ԳԻՏԵԼԻՔ»

1933 թ. Յունուարէն սկսեալ «Կեանք և Գիտելիք» անունով 20 էջնոց պատկերազարդ ամսագիր մը պիտի հրատարակուի մարզական, գիտական, գրական և այլն պարունակութեամբ: Տարեկան բաժնեգրին է Պաղեստինի համար 4 շիլին, Ամերիկայի համար 1 տուար, եւ ուրիշ երկիրներու համար 25 ֆրանգ: Հասցէ՝ B. P. 964, Jérusalem, Palestine.

ՄԻ ՄՈՌՆԱՔ

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԿԻՐԱԿԻՆ

Հայ Բարեգործական Ը. Միութեան որոշման համեմատ այս տարիէ սկսեալ Որբերու Կիրակիին կը յաջորդէ Հայ Մշակոյթի Կիրակին: Սոյն օրը ժողովուրդին տուած նուէրները պիտի յատկացուն դպրոցներու: Միութիւնը կ'օժանդակէ 91 հայ կարօտ վարժարաններու: Հայ Մշակոյթի Կիրակին կը սկսի Դիկտ 3 ին:

ՄՍԱՅԱՆՔ

ՀԱՅ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕՐԱՑՈՅԸ, Հրատարակութիւն «Բանբեր»ի, գինն է երեք ֆրանգ:

ԲԱՑՈՒԱԾ Է

«Նոր Աւետարեք»ի վեցերորդ տարուան բաժանորդագրութիւնը

Բաժանորդագրութիւնը կը սկսի տարուան սկիզբէն, միայն տարեկան բաժանորդագրութիւնները կ'ընդունուին:

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր յարգելի բաժանորդներէն կը խնդրենք որ բաժանորդագրութեան իրենց յետեալ պարտերը տարին չլրացած դիպէն թերթիս հասցէին:

(Շտրունակութիւն կ'ը 360 հն)

Բոլ մէջ իրարու յարաբերակից կը գրտնուինք արդէն: Այս պարագան կը մղէ մեզ փոխադարձ գնահատումի և յարգանքի հոգիով գործակցելու իրարու հետ, երկու եկեղեցիներու և ընդհանուր հայութեան հոգեւոր շինութեան համար:

Գործակցութիւնը կը պահանջէ փոխադարձ վստահութիւն, քրիստոնէական փափկանկատութիւն և համարձակութիւն:

Քրիստոնէական գործակցութիւն, ահա այս պէտք է ըլլայ մեր ուղղութիւնը:

Տ. Ճ. Խ.

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Ե. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 30 ՆՈՅԵՄԲԵՐ, 1932

ԹԻԻ 21

ԱՆՈՐՈՀՈՒԹԵԱՆ ՄԷՋԷՆ

Գ. ՄԵՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

1. ՄԵՐ ԴԻՐՔԸ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՆԴԷՊ

Աւետարանական շարժումը ասկէ դար մը առաջ հայերու մէջ սկսաւ տարածուիլ խաղաղ թափանցումով մը: Հայ պաշտօնական մարմինները և ժողովուրդը Ամերիկեան միսիոնարներու գործունէութեան հանգէպ նախ ոչ թէ հակառակ այլ նոյնիսկ համակիր վերաբերում մը ցոյց տուին: Առաջին միսիոնարները, իրենց յայտարարութեան համեմատ, եկած չէին Հայց. Առաքելական Եկեղեցիին հայկական և արեւելեան գիմագիծը եղծանելու և ոչ ալ նոյնիսկ զայն բարեկարգելու, և կամ անոր մէջ բաժանումներ յառաջ բերելու, այլ եկած էին զայն հոգեւորապէս վերակենդանացնելու, և եկեղեցական բարեկարգութիւնը կատարելու՝ հոգեւորապէս վերակենդանացնելու եկեղեցիին հարազատ զաւակներուն միջոցաւ:

Այս բարեկամական յարաբերութիւնը սակայն շատ երկար չտեւեց. կասկածը, հակակրօթիւնը և ապա հալածանքը ծայր տուին: Այս հալածանքը վերջապէս յանգեցաւ բանադրանքի, որով Հայ Աւետարանականները զրկուեցան Հայց. Եկեղեցիի հաղորդակցութենէն, անոր բոլոր իրաւունքներէն և արտօնութիւններէն: Այս արտաքուստները, այս զրգրախտ պարագաներու տակ, 1846 ին կազմեցին առաջին Հայ Աւետարանական Եկեղեցին Կ. Պոլսոյ մէջ:

Այս կերպով բաժանումը գոյն տուած է Մայր Եկեղեցիի և Աւետ. Եկեղեցիի ապագայ փոխադարձ յարաբերութեանց, որոնք փափագելի և քրիստոնէական ըլլալի շատ հեռի եղած են: Թէպէտ բարեկամական մերձեցումի ջանքերը անպակաս եղած են, բայց 1895-6 ին, հայկական մեծ ջարդին, Աւետարանական Եկեղեցիի կազմութենէն կէս պար ետքը, հոգիներու մէջ իրարու հանգէպ եղբայրական յարաբերութեան առաջին շօշափելի արդիւնքը տեսնուեցաւ. անջատուած հոգիները մեծ տառապանքի մէջ միացան: Ուրախալի պարագայ մըն է որ այս սիրալիր յարաբերութիւնը այդ թուականէն իվեր աւելի զօրացած է:

Ներկայիս ի՞նչ պէտք է ըլլայ մեր դիրքը մեր Մայր Եկեղեցիին հանգէպ:

Քրիստոնէական Եկեղեցիի 20 դարերու հոգեւոր ժառանգը հասարակաց գանձ մըն է: Քրիստոսատիպ ունէ կեանք, Քրիստոսաբոյր ունէ զրութիւն, Քրիստոսաշունչ ունէ երգ, ծագումով ըլլայ Հռոմէական կաթոլիկ կամ Յոյն Օրթոտոքս, ըլլայ Բողոքական կամ Առաքելական, ըլլայ Արեւմտեան կամ Արեւելեան, անխտիր կը խօսին ամէն ճշմարիտ քրիստոնեայի սիրտին: Օգոստինոս և Ոսկեբերան, Ենորհայի և Ս. Լիւսնեան, Մուսի և Սբրբըն, Սուրտար Սինկ և Քակաւա տիեզերական Քրիստոնեաներ

հնչ անոնք կը պատկանին բոլորին: Քրիստոնեայ կոչուած եկեղեցիներու համար յաւելտ ամօթ մըն է ազգայնացնել, իրեն սեպհականացնել ունէ հոգեւոր արժէք մը: Հոգեւոր արժէքները՝ մարդակերտ չեն այլ աստուածակերտ, անոնք տեղական չեն այլ տիեզերական, ազգային չեն այլ համամարդկային:

Հայ Աւետարանական բացառութիւն չի կրնար կազմել. ան եւ ժառանգորդն է այս տիեզերական ժառանգին, որմէ օգտուիլ և ներշնչուիլ իր մեծագոյն արտօնութիւններէն մէկը կը նկատէ: Բայց հոս կէտ մը կայ զոր չենք կրնար աննշմար անցնիլ: Հայ Աւետարանական եկեղեցին մինչ ինքզինք հաղորդակից կը պահէ ընդհանուր քրիստոնէական եկեղեցիին անցեալին հետ, իր յարաբերութիւնը գրեթէ խզած է Հայց. Առաք. Եկեղեցիին անցեալին հետ: Մայր Եկեղեցիի հանգէպ իր գիրքին մէջ բողոքականութիւնը աւելի շեշտուած է, քան աւետարանականութիւնը: Ա՛յ ժամանակը եկած է որ աւետարանական ոգին աւելի շեշտուի քան բողոքականը: Բողոքական ոգին ժխտումն է կարգ մը ենթադրեալ արժէքներու, աւետարանական հոգին հաստատումն է իրական արժէքներու: Հայ Առաք. Եկեղեցիին իրական հոգեւոր արժէքները գնահատելու մասին շատ քիչ խորհած է Հայ Աւետ. Եկեղեցին: Լուսաւորիչն ու Մեծն Ներսէսը, Սահակն ու Մեթոդը, Նարեկացին ու Շնորհալին այնքան մերն են որքան որ կը պատկանին Մայր Եկեղեցիին: Ուրախալի է դիտել որ Հայ Աւետ. Եկեղեցիներու մէջ ընդհանրացած սովորութիւն մը դարձած է Վարդանանց Նահատակներուն տօնակատարութիւնը: Բայց ինչո՞ւ նոյնպէս չընդհանրացնել Լուսաւորիչի, Թարգմանչաց և Հայ Նահատակաց տօները: Լուսաւորչի տօնը (խոր վիրապէն ելլելը) Հայ ազգին քրիստոնէացումը կը պահածացնէ, Թարգմանչաց տօնը Աստուածա-

շունչի առաջին Հայերէն այսինքն ժողովրդային լեզուով Թարգմանութեան յանձնարարումն է, Վարդանանց տօնը հոգեւոր ոյժի բիրտ ոյժին վրայ տարած յաղթանակին փառաւորումն է, Նահատակաց տօնը գաղափարապաշտ ժողովուրդի մը մարտիրոսացման յիշատակումն է:

Բայց այս չի բաւեր: Հայ Աւետարանական ուսեալ դասակարգը, ընդհանրապէս շատ քիչ բան գիտէ Հայց. Եկեղեցիի պատմութեան, անոր մեծ դէմքերուն, մարտիրոսներուն, ճիշ մատենագրութեան և հոգեւոր արժէքին մասին: Նամանաւանդ եկեղեցիի առաջնորդներ ըլլալու պատրաստուած հոգեւոր պաշտօնեաները զուրկ են այս մասին պէտք եղած հմտութենէ: Աստուածաբանական Հայ ուսանողները մինչ ընդհանուր եկեղեցական պատմութեան մասին ընդարձակ ծանօթութիւն կը ստանան, գրեթէ կ'անտեսեն կամ շատ քիչ առիթ կ'ունենան ուսումնասիրելու Հայ եկեղեցագիտութիւնը: Ասիկա անհրաժեշտութիւն մըն է, ոչ թէ ազգայնական զգացումի մը յագուրդ տալու համար՝ այլ նոյնիսկ մեր և ուրիշներու հոգեւոր շինութեան համար: Հայ Աւետ. Եկեղեցիին գերագոյն պարտականութիւններէն մէկն է Հայց. Եկեղեցիին հոգեւոր արժէքները պրպտել, գտնել, վերակենդանացնել, իւրացնել և զանոնք մշտաբար պահել ընդհանուր հայ ազգին օգտին համար:

Հայ Աւետ. շարժումը ինչպէ՞ս որ անցեալին մէջ ծագում առած չէ Հայց. Եկեղեցին հերձուածներու բաժնելու, ներկայիս ալ մեր ամէնէն անկեղծ փափագն է Հայց. Եկեղեցին տեսնել և պահել Հայ Սրեւելեան, անկախ, ինքնատիպ և Աւետարանի հոգիին համաձայն հոգեւորապէս կենդանի և զօրաւոր: Իբր նոյն ժողովուրդին հարազատ քոյր հաստատութիւնները, եւ իբր քրիստոնէական եկեղեցիներ հասարակաց կարգ մը կէտե-

(Շարունակութիւնը էջ 378 ին վրայ)

ՀՈԳԵՒՈՐ ԿԵԱՆՔ

ՀՈԳԵՐ

1. Հոգը իրականութիւն մըն է: Մտք.
Յ. 24.

Երբ երկու ոյժեր զիրար չէզոքացնելու կ'աշխատին—ըլլա՛յ նաւակի մը մէջ ուր երկու մարդիկ հակառակ ուղղութեամբ կը թիավարեն, ըլլա՛յ անձի մը կեանքին մէջ ուր երկու հակամարտ փափաքներ զիրար կ'անդամալուծեն—յառաջ կուգայ այնպիսի մտային վիճակ մը զոր կրնանք հոգ անուանել: Քանզի հակառակ մեծ ճիզի՝ չկայ իրական յառաջդիմութիւն մը, հակառակ զօրաւոր բաղձանքի չկայ իրական գոհացում մը:

Հոս է գաղտնիքը խաղաղութենէ և սերտութենէ զուրկ շատ մը հասարակականութիւններու՝ որոնց միտքին մէջ տեղ գրաւած է երկու տիրող և հակամարտ նպատակներ ունենալու միտումը: Անոնք շարունակ կ'ամբարձրեն մերթ մերթ մէկ նպատակակէտէն զէպ ի միւսը դիրք կը փոխեն: Այս կը նմանի Հաւոգիկեցիներու վիճակին. ո՛չ պաղ ո՛չ տաք: Եթէ այս նպատակներէն մէկը լքուի նախկին վիճակին բաղդատելով քիչ մը խաղաղութիւն յառաջ կուգայ, իրողութիւնը սա է որ կատարեալ աշխարհաօէր մը տեսակ մը իրական գոհացում կ'ունենայ աւելի քան այն քրքրատենաւ որ իրեն հակառակ բանին հետ շարունակ համաձայնութեան եզր մը գտնելու կ'աշխատի: Մենք այնպէս կազմուած ենք որ մեր կեանքը միայն մէկ տիրակալն ազդեցութեան տակ պէտք է գտնուի: Մեզի համար կարեւոր հարցը սա է թէ այս մէկ տիրակալն նպատակ մ'ունենալու համար ի՞նչ ընել պէտք է:

2. Հոգի պատճառները

Երկու տիրակալն նպատակներ ունեն

նալու մէկ պատճառն է մեր պարտականութեան մասին մեր սխալ յայտնումը: Շատեր կը խորհին թէ կեանքի մէջ իրենց հանդիպած բոլոր կարեւոր դէպքերուն իրենք պատասխանատու են, իրենք պէտք են զանոնք կառավարել: Անոնք կ'ուզեն չալկել այնպիսի բեռ մը, որով Աստուած երբեք չուզիր զանոնք բեռնաւորել: Այս պարագաներու տակ շատ բնական է որ անոնք կը մտահոգուին: Անոնք ոչ միայն իրենց բոլոր ոյժով իրենց կարելի ընելու կը ճշտին, այլ արդիւնքներուն մասին ալ կը տառապին և հոգ կ'ընեն: Արինակի համար, քարոզիչ մը գիտէ թէ ի՞նչ պիտի խօսի, բայց այս քանով չի գոհանար, և կը մտահոգուի թէ ժողովուրդը ի՞նչպէս պիտի ընդունի զայն: Մէկը իր մասնաւոր պարտականութեամբը չի գոհանար, և նկատի կ'առնէ նաեւ թէ անոր արդիւնքը ո՛րչափ պիտի երջանիկ ընէ զինքը: Մասամբ կատարուելիք գործով և մասամբ ալ անոր արդիւնքներովը զբաղի՝ երկու տիրակալն նպատակներու տակ չարչարուելու պատճառ կ'ըլլայ: Վախը կրնայ տօր պատճառը ըլլալ: Անհատներէ եւ աշխարհի բնական ոյժերէն վախնալ, յառաջ կուգայ վտանգաւոր արդիւնքի մասին մտաւտանջուելէ: Վախացող մը մինչ իր գործովը կը զբաղի, կը տանջուի նաեւ սա գաղափարով թէ քիչ ետքը ի՞նչ պիտի պատահի: Մինչ ան իր գործը յառաջ տանիլ կ'աշխատի, միեւնոյն ատեն ազատ կը թողու իր միտքը որ յուսալով չարդիւնքներն ալ նկատի առնէ: Այս կը նշանակէ թէ մարդու մը մեծագոյն թշնամին իր անձնաւորութեան երկուքի բաժնուիլն է:

Թրգ. (Տիկ.) Ե. Կ. Քէթէլճեւ

ԲԱՐԵՐԱՐ ՏԱՌԱՊԱՆՔԸ

Մինչ պատերազմի միջոցին, 1915, Յուլիսի իրիկուն մը, առաջին գիծի խրամներէն քիչ մը հեռու շարժական հիւանդանոց մը հաստատուած էր: Կը-
ռիւր կատաղի կերպով կը յառաջանար, և պատգարակներով շարունակ վերա-
ւորները հոն կը փոխադրէին: Քիչ մը
վերջը լուր մը կուգայ թէ ծանրօրէն
վիրաւորուած գինուոր մը հոգեւորական
մը կ'ուզէ: Հոգեւորականը երբ անոր
քովը կ'երթայ անոր վէրքերը անբուժելի
և մահը մօտալուտ կը գտնէ: Զինուորը
իր վիճակին զիտակից էր: Իր բոլոր
ոյժը հաւաքելով կ'ըսէ:—

—Գիտեմ թէ ես կորսուած եմ, և
չառ չպիտի կրնամ ապրիլ: Ես իմ
կոտորացող ցաւերս ամօքելու համար
ձեզ չկանչեցի: Այլ կը փափագիմ ձեզի
ըսել թէ հոգիիս մէջ սարսափելի կեր-
պով կը տառապիմ: Քիչ մը ետքը Աս-
տուծոյ առջևը պիտի ներկայանամ,
բայց ես պատրաստ չեմ Անոր ատենին
մէջ տեսնուելու: Տօրինիք ի վեր
չառ մը մարդերու նման ապրած եմ,
կրօնական սովորութիւններ ունեցած
եմ բայց մեղքի հետ յարաբերութիւնս
կատարելապէս չեմ խզած... Ահա կը
մեկնիմ: Ինծի այնպէս կը թուի թէ
խիզ՛հս գիս անմարելի կրակով կ'այրէ...
կը մեռնիմ... կորսուած եմ... կը
տառապիմ...»

Պաշտօնեան մին կարեկցութեամբ
կը դիտէր այս մահամերձ թշուառը:
Հոգեւորականին վրայ անմոռանալի
տպաւորութիւն թողուցին մօտալուտ
մահաւան պատճառած այն մտատան-
ջութիւնը և տառապանքը, որ կը տես-
նուէին այդ խոշոր և սեւ աչքերու մէջ
և թօշնած գէմքին վրայ: Պաշտօնեան
անոր ձեռքէն կը բռնէ և կ'աղօթէ. ա-
պա Աստուծոյ Հոգիին անոր ներշնչած
խօսքերը կը խօսի:

—Աստուած բոլոր մեղաւորները
անհուսօրէն կը ոիրէ, եւ զանոնք ինչ-
պէս նաեւ ձեզ, փրկելու համար գոհած
է իր Միածինը: Միտքդ բեր թէ ինչ-
պէս խաչուած աւաղակը փրկուեցաւ:
Ամէն հաւատացողին մեղքերը անշուշտ
կը ներուին, Յիսուսի արիւնովը կը
մաքրուին: Ներսեմ ստանալու համար
միայն պէտք է հաւատալ...»

Մինչ այս խօսքերը հոգեւարքի մէջ
եղող գինուորի ակաւջնիրուն կը հասնի
անոր արտայայտութիւնը կը փոխուէր,
ան խաղաղութիւն կը գտնէր, ներ-
ուած ըլլալուն կը հաւատար: Անոր
անյուսնութեան տառապանքով խորշո-
մած գէմքին վրայ անբացատրելի անու-
շտութիւն մը կը փայլէր, և ջանկութիւն
մը կը ցուանար. ան կարծես կերպարա-
նափախուած էր:

—Ահ, Աստուած որչա՛փ բարի է,
աղաղակեց գինուորը, Ան գիտ կը սի-
րէ, կը հաւատամ որ Ան իմ բոլոր մեղ-
քերս ներած է, ես փրկուած եմ, ես Ա-
նոր զաւակն եմ, յաւիտեանս երջանիկ
եմ:

Եւ իր շունչը կ'աւանդէ: Մնիկա
տառապեցաւ: Բայց իր տառապանքը
զինք առաջնորդեց խաղաղութեան և
ուրախութեան:

Նշանաւոր դաշնակահար ֆրէտէրիք
Պրիճ, փոքրիկ զիւղի մը եկեղեցին
այցելած ատեն թոյլտութիւն խնդրեց
եկեղեցիի երգեհոնին վրայ նուագելու
և արտօնուեցաւ: Ծիր ժամկոչը նը-
ւագուած կտորը հիացումով մտիկ ընե-
լէ վերջ բացազանչեց. «Ես երբեք չէի
գիտեր որ այս երգեհոնը այսքան զե-
ղեցիկ երգեհոն մըն է:» Մինչև որ
այն մատերը քու հոգեւոյդ դպչին երբեք
պիտի չզդիտնաս թէ ինչ ներդաշնա-
կութիւն կրնայ յառաջ գալ քու հոգ-
ւոյդ մէջ:

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՒԱՏՔ ՈՒՆԵՆԱԼ

«Թխուս ըսաւ անոնց. Աստուծոյ հաւաստեմանցի»։ Մարկոս 11. 22:

Ինչպէս որ աչքը այն գործարանն է որով լոյսը կը տեսնենք և անով կ'ուրախանանք, այնպէս ալ հաւաստի ոյժ մըն է որով Աստուծոյ լոյսը կը տեսնենք և անոր մէջ կը ֆայտենք:

Մարդ՝ Աստուծոյ համար Անոր պատկերովը ստեղծուեցաւ. իր բոլոր էութիւնը Աստուածային տիպին համեմատ կազմուեցաւ: Անգամ մը մտածէ մարդուն այն դարձանալի կարողութեան մասին որով նա բնութեան մէջ ծածուկ Աստուծոյ խորհուրդները կրնայ գտնել: Մտածէ սիրտի մասին, որ անձնագուհութեան և սիրոյ անսահման ոյժեր կը պարունակէ: Մարդս ստեղծուած է Աստուծոյ համար, զԱյն փնտռելու, զԱյն գտնելու, Անոր նմանելով մեծնալու եւ Անոր փառքը ցուցնելու, բառին կատարեալ առումով Անոր բնակավայրը ըլլալու համար: Եւ հաւատքն է այն աչքը, որ աշխարհէ և եւէ դառնալով Աստուծոյ կը նայի և Անոր լոյսովը լոյս կը տեսնէ: Աստուած ինքզինքը հաւատքի կը յայտնէ:

Յաճախ մենք կը ֆանտանք Աստուծոյ մասին զգացումներ, եւ մտածումներ սրբունցներ, որոնք հազիւ ազատ շոք մըն են միայն, և կը մոռնանք «Անբաղդատիւի Ազրիւրին նայելու»:

Իցիւ թէ սա կարենայինք ըմբռնել թէ մեր հոգիին խորը Աստուած ինքզինքը կը յայտնէ:

Առանց հաւատքի կարելի չէ զԱստուած հաճեցնել և զԱյն դիտաւել: Լուսմանութեան մէջ պէտք է ազօթենք մեր Հօրը՝ որ պաղտուկ տեղ կը գտնուի: Հոն, ուր տաղաւարին գողտուկ տեղը մեզ կը պահէ: Եւ հոն, երբ իր առջիւնը կը սպառենք և կ'երկրպագենք, ինչպէս որ լոյսը իր իզկ բնութեան բն-

րումով ինքզինքը կը յայտնէ, Ան իրապէս իր լոյսը ազատ պիտի թողու մեր սիրտին վրայ ճառագայթելու համար:

Մեր մէկ փափաքը թող ըլլայ համբերել և Աստուծոյ առջեւ լուս կենալ անսահման հաւատքը ունենալով որ նա կարօտալին կը բաղձայ ինքզինքը մեզի յայտնել: Աստուծոյ խօսքովը անանինք հաւատքի մէջ զօրանալու համար: Թող այդ հաւատքը ընդարձակ պաղափարներ ունենայ թէ ինչ է Աստուծոյ փառքը, թէ ինչ է ինքզինքը մեզի յայտնելու համար ունեցած ոյժը, թէ ինչ է մեզ բոլորովին իրը ընելու համար ունեցած կարօտաբաղձ սէրը:

Ահա այսպիսի հաւատքը երբ զապառակ տեղը աւելն օր Աստուծոյ հետ հաղորդակցութեամբ կը զօրանայ և կը մարդուի, ան մեր կեանքին մէկ ունակութիւնը պիտի դառնայ, որ միշտ մեզի վայելել պիտի տայ Անոր ներկայութեան ուրախութիւնը և Անոր փրկարար ոյժին փորձառութիւնը:

«ԱՐՐԱՀԱՄ... ՀԱՒԱՏՔՈՎ ԶՕՐԱՑԱԾ ՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔ ՏՈՒՍԻ, ԵՒ ԻՐ ՄՏՔԻՆ ՄԷՋ ՀԱՍՏԱՏ ՊԱՀԵՅ ԹԷ ԱՆ ՈՐ ԽՕՍՔ ՏՈՒՍԻ ԸՆԵՂՈՒ ՍԼ ԿՍՐՈՂԷ»։ ՀՈՎՄ. 4. 20—21:

«ԵՍ ԿԸ ՀԱՒԱՏԱՄ ՍՏՈՒԾՈՅ ՈՐ ԱՅՍՊԷՍ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ԻՆՁՊԷՍ ՈՐ ԻՆՍԻ ԸՍՈՒԵՑԱԻ»։ ԳՈՐԾՔ 27. 26:

«ՏԷՐՈՋԸ ՍՊԱՍԷ, ԶՕՐԱՑԻՐ ԵՒ ՍԻՐՏԴ ԹՈՂ ԶՕՐԱՆԱՅ. ԱԼ ՏԷՐՈՋԸ ՍՊԱՍԷ»։ ՍՂՄՈ. 27. 14: (Ս. ՄԷՐԷՅ)

«Բրիտանեաններու դժուարութիւնը սա պարագայէն կը ծագի թէ ոչ մէկը կը համարձակի ապրիլ Բրիտանիա քարոզածը: Եթէ աշխարհի քրիստոնեաները համարձակէին ամիս մը ապրիլ ինչ որ կը դառնան, անոնք աշխարհը քրիստոնեայ պիտի դարձնէին» ըսած է Հրեայ մը:

ՆՈՐ ԱՆՈՒՆ ՄԸ

Ուսեալ ոչ-քրիստոնեայ երիտասարդ մը մեծ հետաքրքրութեամբ կարգաց Աւետարանը որ քրիստոնեայ բարեկամի մը կողմէ նուիրուած էր իրեն: Որքան կարգաց՝ այդքան աւելի հիացաւ հոն պատկերացուած կեանքին վեհութեան վրայ եւ հրապուրուեցաւ: Օր մը՝ երբ իր քրիստոնեայ բարեկամին հետ կը խօսակցէր այս նիւթին շուրջ, նա ըսաւ, «Երանի թէ այս վեհ եւ սուրբ կրօնքին համար քրիստոնեայն բառէն տարրեր

անուն մը գտնէիք, ես չեմ ուզեր այդ անունով յորջորջուիլ:» — Մենք քրիստոնեաներս մեր կեղծ կեանքով, մեր կրօնքին մասին այնպիսի վար գաղափար մը տուած ենք որ ա՛յ այդ անունը արգելք մը եղած է շատերուն Յիսուսի գալուն: Տէրը ներէ մեզի եւ արթնցնէ մեզ:

Դուք կիրակիդ լաւ անցուցած չես ըլլար եթէ կարօտի մը նիւթական կամ հոգեւոր օգնելը անտեսես:

ՅՈՂՈՒԱՄՆԵՐ

ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՒ ՀԵՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Ծ. ԽՄԲ. — Այս յօդուածը թարգմանաբար կ'սրտապահէք «Բրոք. Ալեքսանդրէական Վէ Անըն Պապը Էսէրլէրի» անուն հատորէն, զոր խմբագրած է մեծանուն Բրոքէստրին գաւազէ Բրոք. Զ. Պէզնեան: Այս թանձրահատոր զիրքը պատկերազարդուած է կիլիկիոյ շրջանին աւետարանական կառնուոր դէմքերու լուսանկարներովը, եւ կը պարունակէ նախապատերազմի ման շրջանի աւետարանական կեանքի շատ մը գէպքերը եւ հարցերը շօշափող թանկագին յօդուածներ: Յօդուածն տաճկերէն բնագիրէ քաղուած է «Մեր Ժամանակներն ու Պարտականութիւնները» խորագրով գրութենէն զոր հանգուցեալ Բրոք. Ա. Պէզնեան կարդացած է 1911ի Աւետ. Միութեան տարեկան ժողովին մէջ: Գիրքը տպուած է Հալէպ Գոլէճի տպարանին մէջ եւ մօտ օրէն պիտի հրատարակուի:

Ներկայիս թերթերու մէջ եւ խօսակցութեանց մէջ մերթ ընդ մերթ նկատի կ'առնուին կարգ մը հարցեր որոնց մէջ Բողոքականներու համար ամէնէն կարեւորը, թէ՛ հոս եւ թէ՛ երկրին տարբեր կողմերը խորհող միտքերը զբաղեցնող ամէնէն մեծ եւ ամէնէն կենսական նիւթը Միութեան խնդիրը, Մայր եկեղեցիի հետ միանալու խնդիրն

է: Տիար Մ. Մինասեանի Աւետարների մէջ ասկէ առաջ հրատարակուած յօդուածաշարքին նշանակեալ այս ըլլալ կը թուէր: Վերջերս Բիզանդիոնի մէջ տեսնուած կարգ մը յօդուածները մեր ուշադրութիւնը յայտնի կերպով այս հարցին վրայ կը հրաւիրէին: Աւելորդ է հոս ըսել թէ միութիւնը իր իսկութեան մէջ շատ յարգի է, եւ թէ շատ փափագելի է որ ան իրականացնայ երկու կողմերու համար գոհացուցիչ կերպով, մանաւանդ Եկեղեցական Միութիւնը շատ հիմնական գաղափար մըն է, քանզի եթէ այս կարելի գառնայ, Վարչական եւ Կրթական Միութիւններ ալ իրր բնական արդիւնք՝ անոր կը հետեւին: Եթէ կրօնական միութիւն չըլլայ միւս երկուքին համար ալ հաստատ հիմ չկայ: Հետեւաբար կրօնական միութիւնը մեծ հարց մըն է որ կը պահանջէ ամէնէն մանրակրկիտ եւ անաչառ ուսումնասիրութիւն մը: Ան չի լուծուիր սպազմոտիկ զգացումներով: Ցաւալի է որ մեր բարեկամները

գիտակցաբար կամ անգիտակցաբար անյարժար կերպով կը ներկայացնեն այս մասին իրենց թելադրութիւնները, առաջարկներն ու խթանողները:

Շիտակ է որ միութեան հարցը Բողոքականութեան համար ուրիշ ատեն եղածէն աւելի հրապուրիչ եղած պէտք է ըլլայ՝ նկատի առնելով այն պայմանները որոնց տակ այն կը գտնուի այսօր: Բռնապետական շրջանի բնական արդիւնքը եղող արտագաղթը, 1896ի ջարդը, երկու տարի առաջ Առանայի աղէտին պատճառած մեծ աւերը, և Ամերիկեան Պորտին մեր եկեղեցիներուն տուած նպաստին ամէն տարի նուազումը աւելի տկարացուցած են Բողոքական Եկեղեցիին արդէն տկար ելեմտական վիճակը, և Եւրոպայէն կարեկցութեան և օգնութեան աւելի կարօտ վիճակի մը մատնած են զայն: Միութիւնը միշտ բանական է և փափագելի, և ներկայ պարագաները աւելի ազդու հրապոյր մըն են զայն ուղղութեան առարկայ ընելու: Այսու հանդերձ մեր անձնական փորձառութիւնը և մարդկային պատմութիւնը մեզի կը ցուցնեն թէ կրօնական համոզումը Եւրոպայէն և խիղճի զգացումը մարդկային հոգիին մէջ շատ աւելի բարձր տեղ կը գրաւեն քան բոլոր արտաքին ազդակները: Պարտականութեան զգացումը՝ արդիւնքի մասին մարդը խորհիլ չի տար: Շատ ալ պէտք է այսպէս իշխող և իշխուող Եկեղեցին, որ Մասթէոս Պատրիարքի ժամանակ Բողոքականները եկեղեցիէն դուրս վտարեց օգտուելով ամիրաներու շրջանին արտասովոր հեղինակութենէն. քանզի առոր մէջ իշխող մէկ մեծ ազդակը անկասկած պարտականութեան զգացումն էր: Ան պարտականութիւն կը զգար եկեղեցին մաքրել այն անձերէն զոր ինք հերետիկոս կը նկատէր: Եւ միւս կողմէն ճիշդ նոյն պատճառով էր որ

Բողոքականներն ալ՝ հակառակ ամէն դժուարութեան՝ յօժարեցան բաժնուիլ իրենց հոգիին չափ օրրած Մայր Եկեղեցիէն: Իրենց խիղճը ասիկա իրենց համար իբր պարտականութիւն ցոյց կ'աւտար: Եւ հիմա մարդը նոյն մարդն է, խիղճը՝ նոյն խիղճը, և Լուսաւորչական Եկեղեցին՝ նոյն եկեղեցին: Կարելի է պնդել թէ դաւանական, վարդապետական, արարողական կէտերու մէջ Լուսաւորչական Եկեղեցիին ներկայ վիճակը ասկէ 60—70 տարիներ առաջուան Բողոքականներու ժամանակ ունեցած վիճակէն էապէս կը տարբերի: Կարելի է ցուցնել թէ բարեկարգութեան կարօտ հիմնական կէտերու մէջ, ըլլայ մօզի չափ, ան փոխուած ըլլայ: Արդ մենք չենք կրնար տեսնել թէ անկեղծ միութիւն մը ինչպէս կարելի է: Ներկայիս եկեղեցական միութիւն առաջադրող յօդուածներու մէջ ընդարձակօրէն կը ճառեն առաւելապէս բաժանումի փնտրութիւն, միութեան առաւելութիւններուն և օգուտներուն, հին միաբնակներու այս բաժանումի պատճառ եղած ըլլալուն և տեղացիներու ալ ասոր համակերպած ըլլալուն մասին, և ասկէ անդին չեն անցնիր: Անկեղծ միութիւն մը կարելի դարձնող կէտերու վերլուծումն ու ուսումնասիրութիւնը երբեք նկատի չեն առնել: Իբր թէ բարեկրթութեան, քաղաքավարութեան և քսաններորդ դարու հոգիին հակառակ է անցեալ դարուն վիճաբանութեան նիւթերուն մասին այսօր խօսիլ, իբր թէ ամօթ է մարդուն հոգեւոր վիճակին առնչակից խնդիրները յիշել տալ՝ մինչ արդարացի կը նկատուի երկրորդական և չորրորդական կէտերու մասին խօսակցիլ, իբր թէ քսաններորդ դարու կենցաղագիտական կանոններուն հակառակ կ'ըլլայ լիստնք ոչ-աւետարանական են: Բացատրութիւնը գործածել Աւետարանի հետ համաձայն չեղող բաներու մա-

սին։ Այս կարևոր հարցը հրփհրի ծածկոցին տակ անտեսելու ջանալ՝ հրփհրի, քաղաքավարութեան անհրաժեշտ պայմանները նկատուած ձեականութիւններու մոլի իմաստակութիւն մը է։ Այսօր լուսաւորեալ Լուսաւորչական մը կրնա՞յ ընդունիլ «անարատ», «անփոփոխ», «անխախտ» «անսասան» եւ ասոնց նման բացատրութիւնները, որոնք Հայց. Եկեղեցիի մասին կը գործածուին մամուլին մէջ։ Այս որակումները շիտակ կ'ըլլան եթէ զանոնք Քրիստոսի, եկեղեցիի հիմին մասին հասկնանք։ Բայց այդ փայլուն ածականները ի՞նչ նշանակութիւն կ'ունենան, երբ անոնցմով կ'որակենք ոչ-աւետարանական եւ օտարամուտ վարդապետութիւններն ու արարողութիւնները, որոնք այդ Ոսկեղէն Հիմին վրայ բարդուած են գրեթէ զայն անհետ ընելու աստիճան։ Մեր կարծիքով Հայց. Եկեղեցիին բարեկամ չեն անոնք որոնք անոր հոգեւոր զարգացումին արգելք հանդիսացող վէրքը չեն ուղեր բանալ։ Դարմանումէն առաջ ակտիւ անհատ կուգայ։ Եկեղեցիներու միութիւնը եթէ փափագելի է, (եւ այդպէս ալ է), պէտք է որ անոր արգելք հանդիսացող պատճառները նկատի առնուին։ Հետեւաբար սրբազրութեան կարօտ տեսնուած կէտերը պէտք է մէջտեղ նետուին որպէսզի հաւատարիմ եւ տեական միութիւն մը յառաջ կարենայ գալ։ Հարկ չէ յիշել թէ ասիկա ընդարձակ հարց մըն է, որով զբաղելու նպատակ չունինք այս յօդուածով։

Մայր Եկեղեցիի միութեան հարցին մէջ պէտք է նկատի առնել հետեւեալ կէտերը։—

ա) Չմոռնանք որ անցեալ 60—80 տարիներու միջոցին Մայր Եկեղեցիի մէջ հիմնական ըսուելու չափ կրօնական բարեկարգութիւն մը երբեք եղած չէ։

բ) Չմոռնանք որ անկեղծ եկեղեցական միութիւն մը կարելի է միայն անց-

եալին մէջ բաժանումը յառաջ բերող պատճառներու բարձու մով։

գ) Լաւ գիտնանք որ գոհացուցիչ պատճառի մը վրայ չհիմնուած ունէ միութիւն մը ո՛չ Բողոքականութեան համար օգտակար է եւ ո՛չ ալ Լուսաւորչական եկեղեցիի համար փափագելի է։

դ) Սա կէտն ալ չահագորգուողներու ուշադրութիւնը գրաւած պէտք է ըլլայ որ եթէ Մայր Եկեղեցին իրմէ բաժնուող Բողոքականները չխորհի իսկ, իր հեթարկուած կրօնական դժուարութիւնները այնպիսի պարագաներ են որոնք եկեղեցական բարեկարգութիւնը անմիջական լուծում պահանջող հարց մը նկատել կուտան։ Մեր ազգին համար մեծ դժբաղդութիւն մը եղաւ սա պարագան որ անցեալ դարու հայ աշակերտութեան հակակրօն գրականութիւն ջամբուեցաւ։ Այսօր ասոնք իրենց արդիւնքը կուտան։ Այսօրուան հակակրօն դասակարգին եկեղեցիին վրայ բանեցուցած ճնշումը իսկապէս սարսափելի է։ Յառաջ եկող սերունդներու այսօր հաւնաքը կը քաղենք։

ե) Միութեան բառերու այս դէպին մէջ պէտք չէ անտեսենք սա կէտը, որ «կրօնք» եւ «եկեղեցի» բառերը շատերուն կողմէ մեր հասկցած իմաստով չեն գործածուիր։

զ) Այս առթիւ պէտք է յիշենք նաեւ անցեալին հետ մեր յարաբերութիւնը։ Կրօնական ազատութիւնը զիւրին չզլտանք անցեալին մէջ։

Եւ սա մեր մարտիրոսներուն ձայնը։

Եթէ պահ մը երեւակայենք որ իրենց աթոռները թափուր թողուցած մեր սիրելիները, Օսմանիյէի նահատակները, աննենգներու աննենգը եղող Նաթանայէլը, Բրոֆ. Ս. Լեւոնեան, եւ իր ընկերները, իրենց երկնային լուսազարդ բնակարաններէն վար ծռելով հիմա զարմանքով Միութեան այս ժողովին հանդիսատես կ'ըլլան, չպիտի զգամք թէ ասոնք միաձայն մեզի կ'ըսեն։ «Ձեր աւանդին

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՀԱՍՈՒԿՆԵՐՈՒ ՅԱՐՄԱՐ

ԿՈՐՍՈՒԱԾԻՆ ՏԵՂ

(ՊԱՐՈՅՐԻՆ ԿՏՐՈՆՆԵՐԷՆ)

«Անունդ ի՞նչ է մանչուկ»:

—Օրվի՛ք, Տիկին»:

Տիկին Տօթէօու Շաուլ ցնցում մը ունեցաւ:

«Քանի՞ տարեկան ես, սիրելիս»:

—Ինը տարեկան, Տիկին»:

Բժշկուհին ամբողջ մարմնովը սարսուռաց: Այդ էր անունը իր մանչուն որ նոյն տարիքը պիտի ունենար հիմա: Եթեք տարի առաջ իրմէ առնուած էր, բայց անունը յաւատ կը չնչէր իր արտին խորը: Օրվի՛ք»:

Գորովագին կը հակի այս փոքրիկ

Օրվի՛քի վրայ: Նիհար ու դալկուն դէմքը փոքրիկ մանչուն կը հաստատէ ինչ որ բժշկապետը գրած էր ցանկին մէջ այդ անունն առջեւ: Անքուժելի: Խեղճ փոքրիկ էակը, տարածուած պղտիկ ճերմակ մահճակալի մը մէջ, իր սեփայլուն աչքերը կը վերցնէ իր վրայ հակող դէմքին որ ցաւագին երևոյթ մը առած էր, ակամայ: Ա՛հ, այդ պճրտացող մանր սեւ աչքերը որ կը վառին ներքին սպառիչ տենդին: Բացարձակ վատահոթիւն մը կայ այդ նայուածքին մէջ, անխառն, անապակ, և այնքան մանկունակ ինքնամատուցում մը հանդէպ այդ կանացի դէմքին, այնքան գուրգուրանքով խոնարհած իր վրայ, որ կին - բժիշկը անխահեմ արցունքներու բխելը կը զգայ իր թարթիչներուն ներքեւ, անպատեհօրէն:

«Մի՛ վախճար, սիրելիս, չեմ ցաւցըներ»:

—Օ՛հ, ոչ, Տիկին, չեմ վախճար: Քոյր Մարթա երէկ ըսաւ որ . . . Տօթէօու Շաուլ վաղը պիտի գայ, և հիթէ հանդարտ կենամ, մեծ քաղաքը պիտի տանի զիս, ու պիտի բժշկէ . . . Կարծեցի թէ եկողը Պարոն մը պիտի ըլլար, և անուասիկ Տիկին մը . . . »

Եւ երկչոտ ժպտում մը կ'աւելցնէ .-

«Եթէ ցաւցնէք ալ, Տիկին, չպիտի լամ, բժշկուիլ կ'ուզեմ Տիկին»:

Բժշկուհին սեղմեց իր շրթունքները, չպոռկալու համար իր զայրոյթը Քոյր Մարթայի հասցէին: — «Ինչո՞ւ այդ բարի ապուշը անխոհեմ խոստումներ կ'ընէ այս խեղճ տղեկին, մինչ

հաւատարիմ մնացէք»:

է) Խօսք մը եւս, ապագային հանդէպ մեր յարաբերութեան մասին: Եթէ կը հաւատանք որ Աստուածային նպատակ մը կայ Սինայ լեռան մորենիին պէս վառող բայց չհատնող Հայ ազգին 10—15 դարերէ ի վեր պահպանութեան մէջ, եթէ կը հաւատանք որ Աստուած իր նախախնամութեամբը Հայերը ընտրած է Արեւմտեան Ասիոյ ժողովուրդներուն բարոյական և հոգեւոր վերածնունդին յառաջապահը ըլլալու համար, և եթէ կը հաւատանք որ գործին Տիրոջ կողմէ սառակաւաթիւ Աւետարանական եկեղեցիներու յանձնուած է մեզ և մեր ազգակիցները այդ մեծ աւետարանչական պարտականութեան պատրաստելու գործը, եթէ կը հաւատանք այս նախախնամական կարգադրութեան, զիտակի՛ց ըլլանք մեր կոչումին վերականգնում և հաւատարի՛մ մնալք անոր:

գիտէ թէ անբուժելի մըն է ան: Ինչպէս կարելի է թեթեօրէն այսպիսի բաներ ըսել:»

Լուռ անձկութեամբ, կը սահեցնէ իր վարժ ձեռքերը Օլիվիէի մարմնին վրայ: Ահռելիօրէն ազդուան մարմին մը, որ կը դողդողայ փափուկ հըպոստերու ներքեւ, ահաբեկելով, բռնուած թռչունի մը պէս: Բժշկուհին կը շօշափէ մեղմիւ անոր կոնակը, կուրծքը: Ամբողջ ոսկոր, թոյլ կաշիի մէջ: Ականջը կը դնէ սրտին, լիարդնեբուն: Եւ աչքերը կը հանդիպին յանկարծ մանկան աչքերուն, որոնք անասվոր փայլով մը յառած են իրեն: Ի՞նչ սրտայոյզ պաղատանքներ, Ստուած իմ, կուգան անոնց մէջէն ու կը դարձնեն իր սրտին: Բժշկուհի՛, Քալե՛լ: Զեռքերը արիւնին երկարել: Վազել մարգերուն վրայ, խնդալ, խաղալ տղոց հետ: . . . Ուրիշ տղոց պէս: . . . Ա՛հ, այդ երջանիկները, եթէ՛ գիտնային իրենց բախտաւորութիւնը: . . .

Տիկին Տօթթէօն Շառլի ձեռքերը կ'իյնան, յուսահատ շարժումով մը, Օլիվիէի հեռացող կուրծքին վրայ: Անգիին կը դարձնէ գլուխը, չարիքը վանելու անկարող: Զարի՛քը, որ իր գիտութիւնէն աւելի զօրաւոր է, և իր ա՛յնքան բարեբաւն կամեցողութիւնէն: Կը վախնայ, չըլլայ որ ազգէր գոռակէ: Կ'ուզէ հեռանալ, բայց չի կրնար քայլ մը առնել: Հարկ էր սակայն հեռանալ: Ուրիշ փոքրիկներ կան որ իրեն կը ապաստեն, իր վրայ դրած են իրենց յոյսը: . . . Օլիվիէի պէս: Ապրիլու՛ յոյսը: . . .

Բժշկուհին առաջին անգամ է որ կ'այցելէ այս ապաքինարանը, որ մանկանց համար կառուցուած է բաց դաշտին մէջ, լիբան մը ստորոտը: Մտնաւոր պաշտօնով մը եկած է «մեծ քաղաքէն» — փոքրիկներու ոճով — քննական աչքէ մը անցունելու մատաղստի հիւանդները և քաղաք տանիլ իրեն հետ

անոնք, որոնց բուժումը յուսալի է գործողութեամբ, մեծ, կեդրոնական հիւանդանոցին մէջ: Ու խեղճ փոքրիկներ գիտեն թէ «մեծ քաղաք»-ը փոխադրուողներ «գործողութեան ենթակուելով» կ'աղէկնան, և անբուժելիները կը մնան, մինչև որ: . . . Օլիվիէ պիտի մնար ուրեմն: Ի՞նչ ըսել տղիկին: Կը սեղմուի բժշկուհիին սիրտը: Կը սեղմէ բերանը, բայց չի կրնար սեղմել աչքերը: . . .

«Տիկին, ինչո՞ւ կուլաք: . . .» կը հարցնէ մանկուկը: Ու երկչոտ, այլ սրտազեղ ժեսով մը կը բռնէ անոր ձեռքը, կը սեղմէ իր վտիտ այտին վրայ:

Հաստատութեան բժիշկը վրայ կուգայ: Տիկին՝ աչքերը կը մատնեն: «Ա՛հ այս կին-բժիշկները — կը նկատէ ինքնիքեն — անմիջապէս կը յուզուին»: Ու քաղաքավարութեամբ դիտել կուտայ, —

«Դեռ երկու սրահ ունիք, Տիկին, բայց արդէն շատ յոգնած կ'երեւաք: . . .

— Ոչ, ոչ, Տօթթէօն, կ'աղաչեմ, շարունակենք» կը պատասխանէ բռնազբօսիկ ժպիտով մը, Եւ փափութեամբ համբուրելով Օլիվիէի գալիս հար երկու այտերը: —

«Ցտեսութիւն, սիրելիս:»

Օլիվիէ կը նետէ թեւերը, կը սեղմուի Տիկինոյ վզին, մըմնջելով, —

«Պիտի տանիք վրա Զեզի հետ, այնպէս չէ՞, Տիկին, գործողութիւն պիտի ընեն, և յետոյ պիտի կրնամ քալել, այնպէս չէ՞, Տիկին: . . .»

Ի՞նչ վշտապին ակնարկ, որ հաստատական բառ մը կը հայցէ խռոված: Բըժշկապիտը գետին կը խոնարհեցնէ աչքերը: Բժշկուհին պատասխան չի գրտնէր, և արագ քայլերով կ'ուղղուի դէպի դուռը, առանց ետին նայելու:

Տօթթէօն Տիկին Շառլ կ'այցելէ միւս երկու սրահները: Մի առ մի, խղճմտօրէն, և բարութեամբ կը քննէ բոլոր փոքրիկ հիւանդները: Օլիվիէի հետ է տիրաւոր: Սյլ եւս պիտի չտեսնէ Օլի-

վրէ՛ն... Անտաբակո՛յս: Բոյր Մարթա կ'երեւայ, բժշկապետին կողմէ ըսելու թէ իր մասնատենեակին մէջ պիտի ըստասէ Տիկին Շառլի: Բարկացած է այդ անխոհեմ քրոջ, որուն կը հարցնէ առանց երեսը նայելու.—

«Ո՞վ կը հոգայ թիւ երկու սրահի Օլիվիէն: Ծնողք ունի՞: Ո՞ր են:»

—Ո՛չ, Տիկին, որք է բոլորովին: Պետութիւնը կը հոգայ:

Ո՞րք: Դադափաթ մը կը սարսռայ ներքիդին: Բայց ո՛չ: Անկարելի է ի՞նչ պիտի ըսէ ամուսինը: Աչքերը պահ մը կ'անշարժանան ներքին երազանքով մը, ինչ Բոյր Մարթա պատասխանի մը կը սպասէ իրմէ, բժշկապետին տանելու: Յանկարծ խուլ ազդակ մը կուգայ հետուէն: Կը դողացնէ երկուքն ալ: Բոյր Մարթա կը սուբայ դուրս: Բժշկուհին կը հետեւի բնագոյարար: Մանուկ մըն է, որ խելագար պոռչտուքներ կը հանէ: Լուսնո՞տ մըն է արգեօք որ նոպան բռնած է: Ազդակը աւելի կը մօտենայ, կը բարձրանայ, երբ Տիկին Շառլ կը հասնի թիւ 2 սրահին տոջիւ: Բժշկապետը հան է արդէն, սրտեղած: Այսպիսի տեսարաններ չեն պատահիր հաստատութեան մէջ, Բայց այս միակը կը հանդիպի, անպատեհօքէն, երբ քննիչ բժշկուհին հոն է: Տիկին Շառլ աւելի որոշ կը լսէ կոչերը: Կը սարսռայ: Կը ճանչնայ ձայնը.—

«Տիկին, Տիկին... Տիկինը տեսնել կ'ուզեմ...»

Բոյր Մարթա կ'աշխատի հանգրտեցնել, ազդակելով, սաստելով... մինչ Տիկին Շառլ կը հասնի, կը քաշէ անկողինէն, կ'առնէ իր բազուկներուն մէջ, կը տեղմէ կուրծքին...

«Հոս եմ, սիրելիս, ի՞նչ կ'ուզես, ինչո՞ւ կանչեցիր:»

Օլիվիէ կը դողդղայ դնդերային ցընցումներով, ամբողջ մարմնովը, ու գլ-

լուխը Տիկնոջ ուսին դրած կը հեծկըտայ,—

«Տիկին... Տի...կին, Ժագ ըսաւ, ինք վաղը քաղաք կ'իջնայ... Դուք ըսիր էք Տիկին... և ինծի հարցուց,— իսկ դո՞ւ Օլիվիէ...—Տիկինը բան չըսաւ ինծի.—Ուրեմն հոս կը մնաս դուն... Ուրեմն դուն քնաւ պիտի չկրնաս քաղաք, ըսաւ,—ի՞րաւ չէ՞, ի՞րաւ չէ՞, պոռացի: Ձեզի կանչեցի, Տիկին, կանչեցի, կանչեցի... Եւ դուք չէիք գար...»

—Ձիմացայ անմիջապէս սիրելիս: Բայց քեզ հոս չպիտի ձգեմ: Դադրեցուր արցունքդ: Ինծի հետ պիտի գաս, միշտ իմ քով պիտի ըլլաս: Ինծի հետ միշտ, գեղեցիկ տան մը մէջ... Բայց մի՛ լար, աղուոր խաղալիքներ, դիրքեր, պատկերներ պիտի ունենաս, և միշտ շատ մը գեղեցիկ սիրուն բաներ: Բու մայրիկդ պիտի ըլլամ հս: Կ'ուզե՞ս որ ետ քու մայրիկդ ըլլամ: Ուրեմն ալ մի լար...

—Մայրիկ, մայրիկ... ինծի մայրիկ...»

Բոլոր գեղեցիկ խոստումներէն, ամէն սիրուն խօսքերէն, միմիայն այս բառը բռնեց Օլիվիէ: Այս բառը արձագանգեց իր մէջ, ինքնաբերաբար:

Հաստատութեան բժիշկը լուռ կը դիտէր տեսարանը, նախ զարմանալով, ապա տրամաբանելով ինքնիրեն,—

«Աստուած իմ, եթէ Տիկին Շառլ իրօք կ'ուզէ որդեգրել, ի՞նչ բախտ, օչ ոք ունի փոքրիկը աշխարհի վրայ:—Պաշտօնական գործողութիւններ դիւրաւ կը կարգադրուին: Ամուսինը իրաւագէտ խորհրդական մըն է Արդարութեան պալատին մէջ: Եթէ թողու՞մ որ Տիկինը իր հետ տանի Օլիվիէն, ամուսինը հարկաւ իր վրայ կ'առնէ կարգադրել գործը:»

Հետեւեալ օրը, Տիկին Շառլի մասնաւոր ինքնաշարժով, կը մեկնին եր-

կուքը միասին, մինչ միւս փոքրիկնե-
րու փոխադրակառքը կը հետեւի ա-
նոնց, Երջանկութեամբ կը յորդէ բը-
ժըշկուհիին սիրտը, շոայլելով Օլիվիէի
ամէն խնամք և գօւրգօւրանք, մինչ
ինքնաշարժը կը սուրայ դաշտերուն
մէջէն: Բայց թեթեւ մտահոգութիւն
մը տտին տտին կը գրաւէ զինքը:—
Ի՞նչ պիտի ըսէ սմուսինը: Գիտէ որ
իր Կաթմոնը շատ բարի է: Ամէն բան
ընելու յօժար է, զինքը երջանիկ ընե-
լու համար: Կը սիրէ բարիք ընել,
եւ ապաւն պզտիկ հաշմանդամ մը,
շարունակ տան մէջ, որով միշտ պէտք
է զբաղիլ... Միեւնոյն բանը չէ վերջա-
պէս: Հարկաւ: Տալ քանի մը ֆը-
րանգ, օրինակի համար, և տա՛լ ժա-
մանակ, ոյժ, քուն...»

Ինքնաշարժը կանգ կ'առնէ ճերմակ
տան առջեւ: Կառավարը կը բերէ Օ-
լիվիէն իր բազուկներուն վրայ: Տի-
կինը փութով կը հանուեցնէ և կը դնէ
պզտիկը իր իսկ անկողնին մէջ: Եր-
կար ճամբորդութենէն, շատ յոգնած
փոքրիկը: Զեռքերովը կը հանգչեցնէ
անոր գլուխը: Օլիվիէ անուշ ակնարկէ
մը յետոյ՝ կը զոցէ աչքերը: Ու Տիկին
Շառլ գուրգուրոտ համբոյր մը գրոշմե-
լով անոր ճակտին, կ'ուղղուի դէպի
պատուհան, մըմնջելով:—

«Ճակատը տաք էր, բայց յուզումը
հանդարտած է: Աստու կը տեսնե՞ք:»

Ամուսինը եկած չէ դեռ: Պալատը
վեցին կը գոցուի: Դառնալու ժամա-
նակն է: Յուզումով կ'ապասէ:— Ան է
ահա որ արագ կը կտրէ կ'անցնի դիմա-
ցի փողոցէն: Կինը դարձած պէտք է
ըլլայ: Ու տիկին Շառլ հագիւ միջոց
կ'ունենայ վազելու մինչեւ նրբանոցը,
մինչ զոյգ մը հոսովու թեւեր կը փաթ-
թուին իրեն:

«Է՛ ուրեմն, սիրելիս, շատ չյոգնե-
ցա՞ր ժշկական արշաւանքէդ, քննա-
բանութիւններէդ, հիւանդներէդ...»

բայց կը ճառագայթէ դէմքդ...»

—Քեզի ըսելիք բան մը ունիմ...
բայց չեմ գիտեր որ...» Կ'ընէ խնդա-
լով:

Ստուգիւ, չի գիտեր ինչպէս շարու-
նակէ, սիրտը կը սկսի տրոփել, մինչ
ամուսինը կ'ընդմիջէ ժպտելով:—

«Գիտեմ, գիտեմ, անշուշտ գեղեցիկ
ընծայ մը բերած ես ինծի լեռներէն,
վայրի ծաղիկները շատ կը սիրեմ, գի-
տես... Տեսնե՞ք ուրեմն...»

Արգիլելու միջոց չի մնար: Կառ-
թօն կը բանայ դուռը... Փոքրիկ մանչ
մը, իր կնոջ անկողնին վրայ, պալկա-
դէմ, զահանգած աչքերով...»

«Աստուած իմ, ի՞նչ է աս:»

Քայլ մը հագիւ կը յառաջանայ,
փոքրիկը պատին կը դառնայ ահաբեկ,
աղաղակելով:—

«Մայրի՛կ...»

Կինը կը վազէ, կը գրկէ, կը համ-
բուրէ:

«Մի՛ վախճար, սիրելիս, Գոս քեզի
վնասող չըլլար, մեր տունն է այս:»

Ու յուզումէն պողաքող, խեղդուող
ձայնով մը:—

«Նայէ, սիրելիս, քու հայրիկդ է
աս:— Եւ ապիպ քու որդիդ է, Կաս-
թօն, անուշ է Օլիվիէ՛...»

Փառաքանը իսկոյն կ'ըմբռնէ կացու-
թիւնը: Բազուկները կը բանայ լայն,
մէկ սեղմումի մէջ կը միացնէ երկու
պողաքող էակները, քաղցրութեամբ
մթմնջելով իր կնոջ ականջին:—

«Շնորհակալ եմ, Սէրս, Սիրելիս,
է՛ն թանկագին ընծան է իսկապէս,
գոր լեռնէն բերած ես ինծի: Սիր
կեանքին պատմութեան հրաշալի մէկ
էջն է աս, է՛ն գեղեցիկ կրկնութիւնը,
զոր կարգաւ կ'ըզայի շատոնց: Մէկտեղ
պիտի վերածնինք: Օլիվիէ՛...»

Ու բարին Աստուած պարգեւեց ա-
նոնց Օլիվիէի կեանքը:

Լոգան

ՆԱՏԱՐՑԻ ԿՐՏԱՆԵՐ

ՆԵՐ ՍԷՅԻՏԸ

Այս անգամ մեր պատմութիւնը Պարսկաստանէն կուգայ։ Այս զարմանալի երկրին, և անոր թագաւոր Կիւրոսի մասին ձեր Ս. Գրքերուն մէջ կարգացած ըլլալու էք։ Թերեւս այստեղէն էր որ մոկերը Բեթլեհեմի աստղին հետեւեցան, մինչև որ ան կեցաւ հոն ուր մաուրին մէջ մանուկը պառկած էր։

Աստուծոյ փրկիչականներէն մի քանին Պարսկաստանի մէջ քաղաքէ քաղաք կը ճամբորդեն Աստուծոյ սիրոյն պատգամը ժողովրդին բերելով։ Աշխարհիս մէջ չկայ տեղ մը ուր չըլիկ գրածախները աւելի ղոճաւորութեանց ճակատին և աւելի կտրիճ ըլլան քան անոնք որոնք Պարսկաստանի մէջ կը գտնուին։

Ասոնցմէ մէկը՝ Յովհաննէս անուանով՝ Պարսկաստանի մայրաքաղաքը եղալ Թեհրան քաղաքին մէջ կը գործէ։ Օր մը երբ իր գրքերով լի պայուսակով դուրս ելած էր, Բազմին կոչուած քաղաքագետին քով թէյատես մը մտաւ։ Մի քանի մարդիկ սեղաններու բոլորտիքը նստած կը խօսակցէին, իրենց թէյը կը խմէին և կ'ուտէին։ Սեղանի մը մօտ երթալով քաղաքավարօրէն մարդոց հարցոց թէ կուզէի՞ն Աւետարան մը գնել։ Ըսելու եմ որ Պարսիկներուն մեծամասնութիւնը մահմետականներ են, որ ըսել է թէ անոնք կը հաւատան թէ Մուհամմէտ Աստուծոյ մարգարէն է և հետեւաբար անոնք զՄետուած կը պաշտեն անոր իրենց սորվեցուցածին պէս։ Անոնք իրենց Ս. Գիրքը ունին որ Դորան կը կոչուի, որը Մուհամմէտի կողմէն գրուած է։ Ինքը մեծ յարգանք ունի Աստուածաշունչին համար և անոր գրքին մէջ շատ մը պատմութիւններ ընդօրինակուած են

իրր Ս. Գրոց պատմութիւններ, բայց մեր գիտածներէն շատ ու շատ տարբեր։ Ան իր ժողովրդին պատուիրոց որ Քրիստոնէական գրութեանց յարգանք ընծայեն, բայց երբ անոնք կը գտնեն թէ Աստուածաշունչին մէջի պատմութիւնները Գորանին մէջ իրենց կարգացածներուն պէս չեն, Մահմետականները յանցաւոր կը հանեն Քրիստոնեաները զանոնք փոխելուն մամար։ Իրականութեան մէջ, անկասկածօրէն Մուհամմէտ ինքն էր որ զանոնք փոխեց։ Կամ թերեւս ան իր լսածին պէս գրի առաւ զանոնք և ժողովուրդը թխալ մեկնեց։ Բայց Մահմետականները ասոր չեն հաւատար։ Անոնք կըսեն թէ Քրիստոնեաներն են որ Ս. Գիրքը խաբարխած են։ Ահա այս է պատճառը որ յաճախ շատ զրեւոյնք է զանոնք համոզել որ Աստուածաշունչը կարգան։

Պատահեցաւ որ այս մարդոցմէ մին որուն Յովհաննէս աւետարան մը ներկայացուց, Սէյիտ մըն էր, ինչ որ կը նշանակէ Սուրբ մարդ մը՝ Մուհամմէտի սերունդէն։ Միւս մարդիկ ունեւ թէյարանի մէջ նստած էին շատ բարկացան երբ Յովհաննէս աւետարանները Սէյիտին ներկայացուց։ Շատ գէշ անուններով որակեցին զինքը։ Ս. Գրքին և Քրիստոնեաներու մասին աղաոտ բաներ ըսին։ Բարձրաձայն կանչուողներն և Յովհաննէսի երրեք խօսելու պատեհութիւն չտուին։ Անոնցմէ մին անօր թիկնոցին օձիքէն ամբօրէն բռնեց որ չփախչի։ Մեծել սպառնացին։ Իրապէս վտանգի մէջ էր քանի որ այս մարդիկ կարող էին սպանել զինքը կամ ամենաքիչը իրապէս ծանրօրէն իջասիլ իրեն։

Ճիշդ երբ իրարանցումը իբր գազաթնակէտին հասած էր, ծեր մարդ մը թէյաբախէն ներս մտաւ։ Լուրջ և պատկառելի էր և հագուած էր լայնածալ ճերմակ հագուստ մը և փաթթոց մը։ Երկայն գորշ մօրուք մը կուրծքը կը ծածկէր։ Երբ ան ներս եկաւ ամէնքը հանդարտեցան։ Ամէն մարդ զինքը կը ճանչնար։ Ինքն ալ Սէյիտ մըն էր և աւելի շատ յարգուած էր իր տարիքին և հիանալի նկարագրին համար։

— Այս իրարանցումը ի՞նչ է, նա հարցուց։

— Քրիստոնեայ մըն է ան, ըսին։

— Իսլամական օուրը կրօնքին դէմ բան մը խօսեցա՞ւ։

— Ինքը ո՞վ է որ այդպիսի բան մը ընէ։ Զինքը ծեծելով անմիջապէս կը մեռցնէինք եթէ մեր կրօնքին դէմ բան մը խօսած ըլլար։

— Աղէկ, բայց ինչո՞ւ զինքը բռնած էք և կը հայհոյէք իրեն, հարցուց պատկառելի ծերունին։

— Մենք չենք ուզեր այս շրջիկ-գրածախները մեր մէջը պտըտին և Քրիստոնէական գրքեր ցրուեն, պատասխանեց այն մարդը որ Յովհաննէսը բռնած էր։

— Աշխատէ՛ արդար ըլլաւ։ Կանխադատութիւնը մէկդի դիր, ըսաւ Սէյիտը։

Յետոյ շրջիկ-գրածախէն Մաաթէոս Աւետարան մը առաւ։ Մարդիկ կը նայէին թէ անով ի՞նչ պիտի ընէ։

— Ամէնքդ ալ նստէ՛ք, ըսաւ Սէյիտը։ Այս գրքէն պիտի կարդամ ձեզի։ Մօրիկ ըրէք երբ ևս լմնցնեմ և եթէ դուք անոր սորվեցուցածը չէք հաստատէք, այս մարդուն բոլոր գրքերը ձեր աչքերուն առջև պիտի պատուեմ։ Հակառակ պարագային եթէ գրքին ըսածները լաւ գտնէք, յետոյ ամէն մէկդ իրմէն մէյմէկ օրինակ պիտի գնէք։ Համաձայն էք։

— Աղէի, պէլի, պէլի (լաւ, լաւ,

լաւ), անոնք կանչեցին։ Եւ հանդարտօրէն նստան յուսալով շրջիկ-գրածախը խայտառակուած տեսնել։

Ծերունի Սէյիտը գրքին ճորդ. գլուխը բացաւ և կարդաց մեր Տիրոջ սիրելի խօսքերը գեղեցիկ Պարսկերէնի թարգմանուած։

«Ծրանի հոգւով աղքատներուն, վառելի քրկնից Թագաւորութիւնը անոնցն է։ Երանի օգաւորներուն, վասնզի անոնք պիտի մխլթաքոն ին։»

Ամբողջ գլուխը կարդաց, յետոյ վեցերորդ և եօթներորդ գլուխները — մարդկային ականջներուն լսել կարողացած ամէնահրաշալի խօսքերը։

Յետոյ նա գոցեց գիրքը և չորս կողմ նայեցաւ։ Ամէնքը տարօրինակօրէն հանդարտ էին։ Մեծ բառերը իրենց սրտները մտած էին։ Շատ անգամ Գրանին ընթերցումը լսած էին, բայց միշտ Արարելէն լեզուով և շատ քիչ բան հասկցած էին։ Բայց այս ընթերցումը իրենց մօրմէն, իրենց մանկութեան ատեն սօրված լեզուովն էր։ Ամէն բան ընտանի էր իրենց։ Ան որ խօսած էր, իրենց մայրենի լեզուով, կարծեա թէ ոչ մէկ մարդ խօսած էր։

Այս իմ կարդացածներուն դէմ ուէ ըսելիք մ'ունի՞ք հարցուց ծեր Սէյիտը։ Պատասխան չկար։

Առանց բառ մ'ըսելու շրջիկ-գրածախը իր պայուսակէն աւետարաններ հանեց և ամէնուն տուաւ։ Իւրաքանչիւրը մէյ մէկ հատ գնեց։

Յետոյ խօսեցան։

— Ով Քրիստոնեայն էրէ մեզի, ըսին անոնք։ Քեզի չաքչաքելով սխալ ըրինք։

Պարսիկներէն շատեր կան որոնք գաղտնօրէն Յիսուսի հետեւորդներն են։ Թերեւս այս ծեր Սէյիտն ալ անոնցմէ մին էր։

Պէյրուք Թրգմ. Յ. Մ. ԱՊԱՃԵԱՆ

ՆՈՐ ԲԵԹՆԵՋԴԱ ՄԸ, ՏԷՐ

Յաճախ լսեմք էի անոր մասին: Տեսնել տարբեր պիտի ըլլար անշուշտ: Ծովուն եզիրքը, բլրան մը կողին հաստատութիւն մըն է այն, ծովու պէս ամենի ու ալեկոծ և բլրան պէս կանանչ ու խաղաղ: Հակասութիւններ հաշտուած են հոն: Մամլթէյնն է այդ. տխուր բայց ժպտուն, տկար սակայն քսի, մահամերձ սակայն կենդանի մարդոց խմբակ մը կայ հոն:

Քարոզէի պիտի անոնց, առանց գիտնալու թէ իրենք արդէն իսկ սկսած էին քարոզել ինծի քարոզ մը խորունկ և անմոռանալի: Խնդրեցի օր իրենք ընտրեն երգ մը: Յօժարեցան: Օրիորդ մը դողդոջ ձայնով ըսաւ, հոգևոր երգաբանէն թիւ 13ը: Հաւ ծանօթ էի երգին, սովորակաւ երգ մըն էր: Սակայն ինչ խորիմաստ տպաւորութիւն մը գրորոշմուցաւ վրաս երբ իրենց հետ միասին երգեցինք առաջին տողը. «Սպահով Տէրն մեզ պահեց այս շաբաթ ալ մահուանէ»: Ամէն վայրկեան մահուան դէմ մտքառող խումբի մը, յաղթական խումբի մը երգն էր այս: Ո՛չ մէկ երգ այսքան ազդեցիկ եղած էր ինծի համար որքան այս թրթռուն և տկար երգը, ո՛չ մէկ ձայն այնքան զօրաւոր որքան յաճախակի հազը՝ երգին շեշտ տուող:

Մանուկներ, երիտասարդ և երիտասարդուհիներ չափահասներուն հետ մէկտեղ բաժնեկից եղած էին կեանքի տառապանքներուն: Ստիպուած էի տրամադրութիւններս ուրախ ցուցնել իրենց վիշտը չբաղմապատկելու համար: Յաճախ կը ժպտէի: Ո՛հ, ի՞նչ դժուար է լացող սրտէն գէմքին համար ժպիտ մը քաղել: Աւելի զարմացաւ տեսնելով թէ ժպտիս ժպտով մը կը փոխարինէին: Ի՞նչ հերոսութիւն է այն որ մարդ ախտաւոր թոք ունենայ, սակայն ժը-

պիտ մըն ալ գէմքին վրայ:

Երբ այսպէս տեսայ հիւանդները հապկցայ թէ ի՞նչ մեծ արիւթիւն է ուրախ ըլլալ: Հիւանդապահուհիները ելը դիտեցի սորվեցայ թէ ծառայել ի՞նչ ըսել է: Հաստատութեան հոգաբարձ անձնաւորութիւններու մասին հիւսիսահեքայ, Քրիստոնէութեան պատուը պայ: Մտքէս ըսի լերանի այն մարդոց որոնք ցաւը իրենց կը պահեն իսկ ժպտը ուրիշներուն:

Ա՛լ աչքովս տեսայ և գիտեմ թէ ծովու եզիրքին բլրան մը կողին, ծովու պէս ամենի և բլրան պէս խաղաղ Մամլթէյնի Ողդ. բուժարանը կայ:

Տէ՛ր, ի՞նչ ընեմք որ Բեթնեճկայի աւազանին այցելող հրեշտակիդ պէս բուժիչ հրեշտակ մըն ալ Մամլթէյնին գայ:

Ս. Գ. Սիւլահեան

Նոյ. 6, 1932, Պէյրութ.

(Մերձաւոր Աւեհելքի Աստուծաբ. ձեռն.)

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈԹԵՐ

Լիւերջին ամիսները, անգործներու թիւը անհամեմատօրէն բարձրացաւ: Ըստ Ժընէվի Միջազգ. բանուոր. գրասենեակին վիճակագրութեանց, Գերմանիոյ մէջ աշխատաւորներու հաջորդին 28ը անգործ են: Անգլիոյ մէջ՝ հարիւրին 22.9ը, Աւստրիոյ մէջ՝ հարիւրին 21.5ը և Միաց. Նահանգաց մէջ՝ հարիւրին 34ը:

2. Անգլիոյ Լինքէշայր քաղաքը, որ վեց դար շարունակ հագուստի և հիւսուածեղենի կարեւոր կեդրոն մը դարձած էր, յանկաբժ իր գործարաններու գոնիքը փակեց 200000 է աւելի քործաւորներու առջեւ:

3. Ամերիկեան կառավարութիւնը 20 միլիօն պուլէլ ցորին ծախեց Զինատանի, միաժամանակ փրկելով հարիւր հազարաւորներու կեանքը իրական սո-

վաճակէ: Նանքինի կառավարութիւնը խոստացաւ փոխարժէքը վճարել մինչեւ 1936ի վերջը: Տակաւին աւելեալ 16 միլիոն պուլէլ ցարեն կ'ակնկալէ նոյն կառավարութիւնէն:

4. Ամերիկայի մէջ, երկրագործը որ մօտ 16000 միլիոն տոլարի առուտութեամբ կ'ունենար ամէն տարի, այս տարի 11000 միլիոն տոլարի աւագին նուազում մը ունեցաւ: Այս կորուստը Ամերիկայի արտածումներու գումարին գրեթէ կրկինն է:

5. Թուրքիոյ մէջ թուզի և խազսդի գիները անհամեմատ անկում կրեցին: Անցեալ տարի 12 հազար պարկէ աւելի պիտտակ արտածուեցաւ: Իսկ այս տարի միայն 3 հազար պարկ:

6. Սուրիոյ մէջ, այս տարի բերքերը չափ նուազեցան աննախընթաց երաշտութեան պատճառաւ: Ի մէջ այլոց պիտտակը, ձիթապտուղը, և մանուշակ բամբակը որ անցեալ տարուայ բերքին գրեթէ մէկ հինգերորդին կը կը հաւասարի: Կառավարութիւնը օգնել որոշեց կարօտեալ գիւղացիներուն անոնց տալով անհրաժեշտ սերմեր նոր հունձքի համար և գրամական փոքրիկ գումար մը որ ըստ Դամասկոսի տեղական թերթերու կարծիքին 600000 ոսկիի կը հաւասարի: Սակայն այս գումարը անբաւ է հիւանդ գիւղացիներու թիւը:

7. Նոր Տնտեսական Համաժողով մը պիտի գումարուի մօտեւ Լոնտոնի մէջ:

8. Աշխարհիս գլխաւոր արտադրողներուն կողմէ նոր խորհրդաժողով մը պիտի գումարուի Նոյեմբերին, Նիւ Եորքի մէջ, միջազգային տնտեսական հասկացողութեան համար:

9. Գերմանիոյ և Միաց. Նահանգներու մէջ անձնասպաններու և ամուսնալուծումներու թիւը գրեթէ կրկնապատկուած է, տիրոջ տնտեսական տագնապին պատճառաւ:

Քաղեց՝ Յ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՋԱՆԻՅԻ ԷՋԸ

ՀԱԼԷՊԻ Ընկերութեանց Տեղական Միութիւնը այս վերջացող տարին, հետեւեալ երեք ուղղութեամբ գործունէութիւն ունեցած է:

Ա. Ընկերակցութիւնները իրարմէ տեղեակ, և իրարու հետ դորձակցութեան մէջ պահել:

1. Ամէն ժողովին սկիզբը իւրաքանչիւր անգամ տեղեկութիւն հաղորդած է իր ընկերութեան մասին:

2. Բոլոր ընկերութիւններու վարչութիւններուն յատուկ երկու անգամ ընկերային հաւաքոյթներ կազմակերպած է, որով անոնք առիթ ունեցած են զիրար ճանչնալու և իրարու հետ յարաբերելու:

3. Երկու անգամ բոլոր ընկերակցութիւններու համար ընդհանուր պաշտամունքներ կազմակերպած և այդպէսով անոնց մէջ միութեան և գործակցութեան ոգին քաջալերած է:

Բ. Գրական և հրատարակչական:

1. Վերս Աւետարեւորի մէջ Զանիցի յատկացուած երկու էջերը լաւագոյն կերպով գործածելու աշխատած է:

2. Վերս Աւետարեւորի Զանիցի թիւը (թիւ 10-11 զոյգ թիւը) օգտակար և հրապուրիչ բովանդակութեամբ հրատարակելու աշխատած է:

3. Սուրիոյ Զանիցիներու Բ. խորհրդակցական ժողովին մէջ ընդունուած ծրագիր-կանոնագիրը և Սեխտի քարտերը տպել տուած է, մասնակցութեամբ Պէյրութի Զանիցիներու:

Գ. Աւետարանչական գործունէութիւն:

1. Անգամակցած է Սուրբ Երկրի Կիրակոսեայ Դպրոցներու Միութեան և փոքրիկ գումարով մը օգնած է ատոր:

2. Փոքրիկ գումարով մը օգնած է Սեւանիկի Ե. Ք. Ջ. ի յատուկ գրադարանի կազմութեան:

4. Երիտասարդներու և մանուկնե-

րու մէջ հոգեւոր և ընկերային գործ ընելու համար երկու պատուիրակութիւններ ղրկեց մին՝ Ճարապետ, Ազէզ, Գրքըգխան, Պէյլան, Ֆարթըսը ևն. իսկ միւսը, Անտիոքի, Ճէպէլ Մուսայի և Ճէպէլ Ագրայի գիւղերը:

ՕԴՏԱԿԱՐ ԶԵՌՆԱՐԿ ՄԸ

Այս աճառ Հալէպի Զանիցներու Տեղ. Միութիւնը որոշեց մանուկներու և երիտասարդներու մէջ հոգեւոր և ընկերային գործ ընելու համար երկու պատուիրակութիւն ղրկել շրջակայ գիւղերը: Գործը կը կարօտէր գրամի և մենք չունէինք պայն, հետեւաբար ազօթեցինք ասոր համար: Մի քանի օր վերջը երբ բարեկամի մը հետ կը տեսնուէինք այս մասին, նա քաջալերեց մեզ և խոստացաւ ծախքին մէկ կարեւոր մասը ինք հայթայթել: Այս առակնկալ աջակցութիւնէն քաջալերուած՝ դիմեցինք նաև ուրիշ բարեկամներու և կազմակերպութիւններուն որոնց ընդունալ առատաձեռնութեամբ մասնակցեցան այս ձեռնարկին եւ գոյացաւ 32 սուրբական ոսկի:

Ճամբու ծախքը այսպէս ապահովուած ըլլալով առաջին խումբը, բաղկացած Տիարք Մ. Շնորհօքեանէ և Յ. Դաւիթեանէ, ճամբայ ելաւ դէպի Ճարապետ, ուր մնացին շաբաթ մը, այդ միջոցին բացին մանուկներու համար աճառնային Ս. Գ. դպրոց մը, ունեցան հոգեւոր և ընկերային հաւաքոյթներ հոն արդէն գոյութիւն ունեցող փոքրիկ Զանիցին և ընդհանուր երիտասարդներու համար, կատարեցին ազօթաժողովներ ընդհանուրին համար: Վարեցին կիրականօրեայ պաշտամունքները և խօսեցան լսարանի մէջ: Ապա այցելեցին Ազէզ, Գրքըգխան, Պէյլան. Ֆարթըսը, Սօվուզ—Օլուզ եւ Աթըզը: Ամէն տեղ ցրուեցին հոգեւոր գրքոյկներ

և տետրակներ, խօսեցան բնմորէն, մանուկներու և երիտասարդներու յատուկ հաւաքոյթներ ունեցան ուր որ կարելի էր:

Երկրորդ խումբը, բաղկացած Տիարք Բ. Գալֆահանէ և Վ. Մարլեանէ ճամբայ ելան 12 ին իրենց հետ ունենալով մոզական լապտեր մը, փոքրիկներու համար մեծ քանակութեամբ պատկերներ, հոգեւոր գրքոյկներ և տետրակներ: Նախ այցելեցին Ճիար ի Շուղուր, ուր ունեցան ընդհանուրին համար կրօնական հաւաքոյթ, ուր ներկայ եղան տարբեր ազգութիւնէ, տարբեր կրօնքէ և տարբեր յարանուանութիւնէ անհատներ, հոն հաստատեցին նաև կիր. Դպրոց մը որ կը շարունակուի Տիար Ս. Շանլեանի ջանքերով, հոն խօսեցան նաև ընդհանուր ժողովրդին հոգեւոր նիւթերու շուրջ եւ ալքուրի փնտաւներու մասին: Ապա Անտիոք անցնելով կատարեցին հոգեւոր ժողովներ և ազօթաժողովներ Հայ եկեղեցւոյ և Արաքսիօս Բող. Եկեղեցւոյ մէջ: Անկէ գացին Եօզուն—Օլուզ գիւղը ուր ունեցան շատ օգտակար գործունէութիւն մը բանալով մանկանց համար Աճառնային Սբ. Գրոց դպրոց մը, վերակազմելով Զանից ընկերութիւնը որ պատճառով մը թոյլ վիճակի մատնուած էր, և ամէն իրիկուն ընդհանուր ժողովուրդին համար հոգեւոր ժողովներ սարքելով ուր ներկայ կ'ըլլային գրեթէ գիւղի բոլոր ժողովուրդը: Այցելեցին Ուրտըքպէյ և խօսեցան ժողովրդին: Աճառնային զրպրոց բացին նաև Պէյթիյաքի մէջ: Ապա անցնելով Բէսապի շրջանը Աճառնային Սբ. Գրքի դպրոց բացին Էքիզուլուզի, Բէթօքիւնէյի և Բէսապի մէջ: Պատանհաց Զանից մը և կիրականօրեայ դպրոց մը Էքիզ—Օլուզի մէջ, և ընդհանուր ժողովրդին համար հոգեւոր ժողովներ սարքեցին ամէն իրիկուն: Այցելեցին նաև Գալատուրանը և Պաղճաղըզը և

խօսեցան ու աշխատեցան օգտակար ըլլալու անոնց։

Այս խումբը 29 օրուան մէջ ճամբորդած է 500 քմ. (100 քմ. ը քալելով) այցելած է 12 գիւղեր, քարոզած է 22 անգամ մօտ 4000 հոգիի, 28 անգամ խօսած են ուրիշ ընկերային նիւթերու շուրջ, Ամառնային Սբ. Գրոց դպրոց բացին 5 տեղ և կիր. դպրոց 3 տեղ որոնց մասնակցած են 500 մանուկներ, ցրուած են 2500 է աւելի գրքոյկներ և տետրակներ, հիմնած են 3 Զանից ընկերութիւններ։ Մոզական լապտերով ցոյց տուած են պատկերներ Յիսուսի և Պօղոսի կեանքէն։

Աղօթենք որ այս համեստ գործունէութեանց բարի արդիւնքը տեւական ըլլայ, յուսանք որ նաև Հալէպի Զանիցներու Միութիւնը այս վայրերու հետ թղթակցելով ակտուած գործին քիչ առաջ և ուրիշ տարիներու համար ալ, եթէ կարելի է, նման ձեռնարկներ կատարէ։

Մ. Պ

ՄԵՐ ՏՊԱՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երբ Հալէպի Զանիցներու կողմէ տիրոյ և ծառայութեան ոգիով այցելեցինք Հայ գիւղերը, ամէն տեղ ջերմ ու տիրալիր ընդունելութիւն գտանք անարժանաբար։ Ժողովուրդը ամենուրեք մեզի ցոյց տաւ իր անկեղծութիւնը, ճամբատասիրութիւնը և հիւրընկալ ոգին հակառակ տիրող կացութեան։ Իսկ այս վայրերէն մեր առած ապաւորութիւնները կ'ամփոփենք ստորեւ։

Տնտեսական.— Ճէպէլ Մուսայի և Ճէպէլ Ագրայի գիւղերուն բնակիչները տնտեսապէս շատ դժուարին կացութեան մը մատուած են։ Գիւղի մը մէջ լսեցինք որ անցեալ տարուան ընթացքին երեք չորս ամիս շարունակ միմիայն խոտով ապրող ընտանիքներ և

նոյնիւս անօթութիւնէ մեռնողներ եղած են։ Երբ ժողովուրդ մը տնտեսապէս այսքան ընկճուած է, ինչպէ՞ս կրնայ իր հոգեւոր և մտաւոր պէտքերուն մասին խորհիլ։ Անոնց նիւթակաւ օգնութեան հասնիլ անհրաժեշտութիւն մըն է զոր բոլոր հայ ժողովուրդին խղճին կը յանձնենք։

Հոգեւոր կեանք.— Ժողովուրդը մեծամասնութեամբ եկեղեցասէր և կրօնասէր է, և կրօնքի վերաբերեալ խընդիրներու մէջ խիստ բծախնդիր։ Երբ նպատակի մը համար հանգանակութիւն մ'ըլլայ, հակառակ իրենց աղքատութեան, անոնք կ'ուտան։ Տառնիրկօւ Աւետ. ընտանիքէ բաղկացեալ համայնքէ մը հանգանակութիւն եղաւ և զոյացաւ վեց մէծիտ։ Այս բոլորը լաւ, աւակայն պէտք է ըսենք որ ապրող կրօնքը անոնց մէջ շատ քիչ թափանցած է։ Անոնք աւելի պէտք ունին Ապրող Քրիստոսի, որ կրնայ իրենց կեանքը փոխել։ Անոնց պէտք են հոգիին և կեանքին խօսող քարոզներ և ծառայութեան ոգիով առգործուած առաջնորդներ, որոնք գիտան նաև ամէն կերպ զոհողութիւն յանձն առնել հօտին համար և քիչ խօսին դրամի մասին։

Կրթական կեանք.— Գիւղերու մէջ մանուկներու և պատանիներու թիւը խիստ շատ է, բայց անոնց կրթութեան համար տրուած խնամքը շատ քիչ է։ Շատ անգամ 50—60 աշակերտներ կը յանձնուին օրիորդի մը կամ պարոնի մը խնամքին որը հազիւ հազ նախակրթարանի մը ուսումը առած կ'ըլլայ։ Մարմնամարզի և հրգեցողութեան շատ ջնջին տեղ մը կը տրուի հոն և մանուկները զրեթէ հրգել և մարզանք ընել չեն սորվիր։ Գիւղի մը ամառնային Սբ. Գր. դպրոցին մէջ աւելցինք շարք մը մանկական հրգեր սորվեցնել և ի վերջոյ անկարելի գտանք, և ամբողջ

շարժութեան մը մէջ կրցանք միայն համար մը երգ սորվեցնել: Ճշմարիտ, անկեղծ, զոհողութեան ոգի ունեցող ուսուցիչներու պէտքը անհրաժեշտ դարձած է այլեւս:

Երիտասարդութիւն.— Գիւղերու մէջ երիտասարդաց թիւը քիչ է: Տնտեսական պատճառներով անոնք օտար երկիրներ գաղթած են, հօն մնացածներն ալ ընդհանրապէս մտած են կուսակցական շարքեր:

Ընկերային կեանք.— Սրճարանն է գիւղերու ընկերային միակ շրջանակը. ծերեր, երիտասարդներ և նոյն իսկ պատանիներ հոն զիրար կը գտնեն:

Կարելի չէ՞ արդեօք հոն զրկել յարմար գործիչ մը որ աշխատի հոն ընկերային մարտեր շրջանակներ և միջավայրի ստեղծելու, բարոյական և կրօնական բարձր ակգրունքներու վրայ հիմնուած: Եթէ այս բանը վանք տունի, հոն մօտ օրէն պիտի ունենանք ապականած երիտասարդներու հսկայ թիւ մը: Եթէ կ'ուզենք Գէսապի և Պիթիասի եկեղեցիները բաց և պարծունեայ վիճակի մէջ պահել և փրկել հարկաւոր մանուկներու կեանքը ապագայ բարոյական և ֆիզիքական ապականութենէ՝ միջոցներ փնտռենք անոնց ընկերային մարտեր միջավայր մը ստեղծելու համար: Անոնց հոգիները կ'աղերսեն: Ո՞վ պիտի տեսնէ և ո՞վ պիտի լսէ անոնց հոգեկան աղերսը:

Վ. ՄԻՍԻՐԼԵԱՆ

Բ. ԳԱԼՅԱՆԱՆ

ՊԵՅՐՈՒԹԻ Զանիցը՝ իր բացման ժողովը ունեցաւ էջրէֆիյէյի եկեղեցիին մէջ, Հոկ. 9. կ. Ե. ժամը 4ին. Օրումն բանախօսն էր Տիար Փօլ Տէր Պողոսեան: Իր նիւթն էր Վիսչն առնել և հետեւի Յիսուսին: Քաղքիս Երկսեռ Զանիցը գրեթէ ժամանակին պատրաստ էր պատգամը լսելու:

ՀԱՅ ԿԵԱՆՔ

Մերձաւոր Արեւելքի Առաքածաբանական Ճեմարանը Նոյ. 11, երեկոյեան ժամը 8ին պաշտամունքի (convocation) մասնաւոր ժողով մը քարտեց, որ շուրջ 250 հոգի ներկայ էին:

Առաջին խօսողն էր Ճեմարանի Նախագահը Վեր. Ս. Կ. Կրինզլէյտ, Վեռալ Ընթանանք նիւթին շուրջ: Յարգելի Նախագահը «Պէյրութի Կրօնական Գործիչներու Դպրոց» ին մի հակիրճ պատմականը ընելէ յետոյ սապէս ըսաւ. ՎՄ. Ա. Ա. Ճեմարանէն կ'ակնկալենք որ նա ըլլայ. ա) Աւետարանչական, բ) Գործնական, գ) Խոհանոցային, զ) Գիտութիւնը կրօնքէն չզատող, և ե) Հոգեւոր փորձառութիւն ունեցող դպրոց մը:

Երկրորդ խօսողն էր Ճեմարանի Ուսուցչապետը Բրոֆ. Լ. Լեւոնեան, Վերքոնական Վարժարանի Պաղատարականները նիւթին շուրջ: Յարգելի Ուսուցչապետը Աթէնքի Կրօնական Վարժարանին կարճ պատմականը ընելէ յետոյ սապէս ըսաւ. Վերքոնական Վարժարանը չորս որոշ յատկանիշներ ունեցած է. Շեշտել ա) Ուղիղ սերտողութիւնը, բ) Կրօնքը իբր կեանք, գ) Մառայութեան ոգին, և զ) Աստուծոյ հետ հաղորդակցութիւնն ու մարդոց հետ սերտ յարաբերութիւնը:

Վեր. Ճ. Նիքըլ և Վեր. Րիկզէն յետոյ Պէյրութի Ամերիկեան համալսա-

ներկայիս մօտ 180 (մեծերն ու կըրտաբերները) երկսեռ անդամ և անդամուհիներ լծուած են պործի: Իբեհն եռանգը և Գործունէութիւնը, գնահատելի են: Ամէն կրթակի վեց կիցքներու մէջ ասոնք ժողովներ ունին:

Ա. ԱԻԱԿԱՆ

րանի նախագահը Տր. Պ. Տաճ ալպէս արտայայտուեցաւ: «Ասկէ 14 տարիներ առաջ Մեծ Պատերազմը զաղբեցուց: Այս երկար ժամանակամիջոցին մարդիկ սա համոզման եկան թէ աշխարհի խաղաղութիւնը ո՛չ թէ քաղաքականութեամբ ձեռք կրնայ ձգուիլ, այլ միայն կրօնական ճշմարիտ սկզբունքներով: Կրօնքի պաշտօնեաներուն պատասխանատուութիւնն և գործը շատ մեծ է: անոնք մտքով եւս պատրաստուելու են: Ուստի ես Պ. Ա. Համալսարանի ուսուցչական կազմին կողմէ խորին շնորհակալութիւններ կը յայտնեմ Մ. Ա. Ա. Զեմարանի ղեկավարներուն որոնք մեզի իրենց սաները կրթելու առիթը կը շնորհեն»:

Հետեւեալները մի քանի վայրկեան խօսեցան:

Տիար Ապուտ Հաֆիզ Ֆէրիս «Սուրիոյ Արաբական Եկեղեցիներու Սինոտին» կողմէ, Վեր. Ե. Կէօքկէօղեան «Հայ Աւետ. Եկեղեցիներու Միութեան» կողմէ: Տիար Ֆ. Զումթ «Պաղեստինի Անգլիական Եկեղեցիներու նախագահի» կողմէ: Աւագարկաւագ Ու. Սթիւըրթ Երուսաղէմի Անգլիական Եպիսկոպոսին կողմէ: Գեր. Շահէ Եպսկ. Գասպարեան Վեր. Բ. Կաթողիկոսին կողմէ: Ժողովը ժամը 4.30 ին Գերապատիւ Շահէ Եպսկ. Գասպարեանի պահպանիչովը վերջացաւ:

Պէյրուք

Ե. Տ. ՄԿՐՏԻԶԵԱՆ

Պէյրուքէն ստացած մեր մէկ եկրորդ գրութիւնէն կը հասկնանք որ Վեր. Ե. Կէօքկէօղեան այս հաւաքոյթին մէջ իր կարգացած կարճ ճառով յիշած է թէ Միացեալ Դպրոցը ազգակ մը պիտի դառնայ Մերձաւոր Արեւելի ժողովուրդները իրարհակցողութեան և գործակցութեան մղելու մէջ, զերծ ըլլալով ազանգամուկան նեղմիտ հոգիէ:

ՀԱԼԷՊԻ ԲԵԹԷԼ ՀԱՅ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՑԻԻ ԿԵԱՆՔԷՆ

Բեթէլի ներկայ հովիւը Վեր. Ն. Սարեան, վերջին երկու ամիսներու ընթացքին եկեղեցւոյ թոյլ և անապաւն երանդամներուն մէջ քրիստոնէական օրհմէր տեղեկութիւն տեսակէտով, իր անկեղծ և հոգեւոր քարոզչութեամբ մեծ դեր կատարած է: Եկեղեցի յաճախողներ մեծ եռանդով և խանդով կուգան ունկնդրելու Տէրով խօսքը և կը յաջգեն իրենց ըրած նիւթական խօստումները: Աղօթածաղիներու յաճախող ժողովուրդին թիւը զգալի կերպով աւելցած է:

Սեպտ. 23ին, ուրբաթ իրիկուն, Բեթէլի Երկսեռ Ջանից Ընկերակցութիւնները ընկերային հաւաքոյթ մը ունեցան, ուր Վեր. Ն. Սարեան շեշտեց թէ Ջանիցը հոգեւոր ընկերութիւն մըն է և մեծապէս խրախուսեց անոր անդամները: Սոյն երեկոյթը՝ ներկաները իրարու սերտ կապերով կապող կարեւոր ազգակ մը եղաւ, Երեկոյթին վերջաւորութեան մօտ անդամները հիւրասիրուեցան պաղպաղակով և հովիւին օրհնութեամբը ցրուեցան:

Վեր. Ն. Սարեան կ'աշխատի Տէրով գործին աւելի ծաւալման և արդիւնաւորման համար: Երկօրեա Ջանիցներուն ամիսէ մը ի վեր ինք առաջնորդած և անդամները իմի հաւսքած է: Ուրախ ենք որ Հոկտ. ի վերջին կիրակին ընկերակցութիւններ իրենց գաւառներէ թիւնները կատարելով վերսկսած են իրենց կանոնաւոր գործերուն:

Տխրունի: Բեթէլ եկեղեցւոյ ծանօթ ուսուցիչ Տիար Յ. Հայտօսթեանի Տիկինը Եսթեր Հայտօսթեան Հակ. 16ին իր մահկանացուն կնքեց, հինգ տարի տառապելէ վերջ:

Թաղման հանդէսը կատարուեցաւ Բեթէլի մէջ Հոկտ. 20ին, կէսօրէ վերջ ժամը 3ին, ուր Վեր. Կ. Քէթէնճեան,

Վեր. Ս. Աղապահան և Վեր. Ն. Սար-
հան խօսեցան, պարագային յարմար
կերպով:

ԶԱԼԷՊ, Էմանուէլ Հայ Աւետ. եկե-
ղեցիի կեանքէն:

Հոկ. 23 ին 19 նոր անդամներ ըն-
դունուած են, որոնց միտ մասը երիտա-
ւարդներէ կը բաղկանան. ուրախալի
պարագայ մը: Նոյն օրը Ֆրանսական
բանակէն Մատակոսկարցի երեք զին-
ուորներ եւս անդամ ընդունուած են:
Եկեղեցական շէնքի բակին մէջ երիցա-
տուն մը շինելու համար Տոքթ. Կ. Պա-
պիկեան և Տոքթ. Լ. Չամչեան 125
ական և հովիւը 50 օսմ. ոսկի փոխա-
տուութիւն մը ըրած են: Եկեղեցիին
անդամական վերջին մէկ ժողովին մէջ
որոշուած է հոգևոր տուրքեր հարկերին
25 համեմատութեամբ աւելցնել:

Վեճ ՇԱՅԱԹՆԵՐ տեւող ամառնային
վարժարանը, որ իր բացառիկ յաջողու-
թիւնը կը պարտի Պատ. Մ. Բէնճիլիա-
նի և իր օգնական ուսուցիչներուն անձ-
նուէր ծառայութեան, 400 երկսեռ ա-
շակերտութիւն արձանագրեց որոնք ե-
կած էին զաղթականիս չորս վարժա-
րաններէն անխտիր, և որոնց աւանդ-
ուած են Ս. Գրքի, երաժշտութեան, ձե-
ռագործի, տնտեսագիտութեան, մար-
զանքի և խաղերու դասեր:

Սեպտեմբրի վերջերը վերաբացուե-
ցաւ մեր վարժարանը նոյն ուսուցչա-
կան կազմով և 210 երկսեռ աշակերտ-
ներով: Մեր կիրառկնօրեայ վարժարա-
նի ղեկավարութիւնը ստանձնեց Պատ.
Մ. Բէնճիլիան օժանդակութեամբ անձ-
նուէր ուսուցիչներու: Բոքինիոյ Բ.
Ջանից Երկսեռ Միութեան կրօնական և
գրական ժողովները եւս վերսկսած են
մօտ երկու ամիս արձակուրդէ վերջը:
Առաջին ժողովին առաջնորդեց Վեր. Կ.
Սթամպոլլուեան: Իսկ երկրորդ ժողո-
վին բանախօսեց Տր. Ճ. Ք. Մարտին
կարգ մը օգտակար և ֆինասակար մի-

ջատներու կեանքին վրայ:

Բոքինիոյ Հայ Աւետարանական ե-
կեղեցւոյ սրահին մէջ Աւետարանական
գործիչներու յատուկ ֆոնֆիրմն մը տե-
ղի ունեցաւ Հոկտ. Տին: Աւետարանա-
կան շարժման, նա մանաւանդ Կ. Դպրո-
ցի, ցայտուն սկզբունքները շեշտող խիստ
շահեկան և հմտալից դասախօսութիւն
մը ըրաւ սոյն հաւաքոյթին ընթացքին
Աթէնքի Ագլիական հիւպատոսարանի
ինչպէս նաև նոյն քաղաքին Անգլիա-
կան Եկեղեցւոյ հոգևոր հովիւը Եպիսկո-
պոս Բէյմըր: Հաւաքոյթին նախագա-
հը Տր. Ճ. Ք. Մարտին և ուրիշներ գը-
նահատական խօսքեր ըրին սոյն օգտա-
շատ պատեհութեան համար: Հոկտ.
13ին նմանապէս մեր եկեղեցւոյ վերի
սրահին մէջ խորհրդակցական ժողով մը
տեղի ունեցաւ Բոքինիոյ բոլոր ազգա-
յին և յարանուանական վարժարաննե-
րու երկսեռ 40 ուսուցիչներուն մաս-
նակցութեամբ:

Նոյն սրահին մէջ Բոքինիոյ Ազգա-
յին Երկսեռ Վարժարանի նորակազմ
խնամակալութիւնը Հոկտ. 50ին ի նը-
պաստ իրենց վարժարանին ճոխ թէյա-
սեղան մը սարքեց նախագահութեամբ
վիճակիս Դերաշնորհ Առաջնորդ Մազ-
լլմեան Սրբազանի և ներկայութեամբ
Բոքինիոյ ընտրանիին: Սոյն առիթը
գրողը կոչ ըրաւ ներկաներուն ընձե-
ռելու իրենց անվերապահ աջակցութիւ-
նը ինչպսպա Բոքինիոյ Ազգային Երկ-
սեռ Վարժարանին: Ներկաները առա-
տաձեռնութեամբ մասնակցեցան նուի-
րահաւաքութեան որմէ այդ օրը գոյա-
ցաւ մօտ տասը և հինգ հազար, 15000,
Յունական ֆրանք: ՎԱյս որչափ բարի
ու որչափ վայելուչ է որ եղբայրները ի-
րարու հետ միաբանութեամբ բնակին:

Արքեմ

ԳՐԻԳՈՐ ՏԷՄԻՐՃԵԱՆ

ԹՈՒՐԲԻԱՅԷ նոր եկողի մը յայտնութեան համեմատ Այնթապի Հայ Առաք. Եկեղեցիի շէնքը կը շարունակէ իբրբանտ ծառայելու, ուր՝ սակայն՝ խոնուած աւելի քան հազար բանտարկեալներու մէջ թոքախտը սկսած է ծաւալ գտնելու Հայ Աւետ. Բ. Եկեղեցիի և դպրոցներուն մնացած շէնքերը և գետինները աճուրդով մի քանի հարիւր օսկիի ծախուած են: Եւ Հայ Աւետ. Ա. Եկեղեցիի շէնքը, որ իբր շարժանկարի թատրոն կը գործածուէր և վերջերս հրդեհի ճարակ եղած էր, աճուրդի հանուած է բայց դրամական տագնապի պատճառաւ գին տուող չէ եղած:

Մարաշի մէջ քրիստոնէութիւնը ընդգրկած թուրքերու թիւը հասած է 30ի, որոնք Անգարայէ եկած հրամանի համաձայն ազատ պաշտամունքի արտօնութիւն ստացած են:

ԱՄԵՐԻԿԱԲՆԱԿ Այնթապի ներու Միութիւնը՝ այս տարի Սուրիա բնակող իրենց հայրենակիցներուն ղրկած տարեկան կրթական նպաստը հարիւրին 33 համեմատուած համար պակսեցուցած է:

ՊԵՅԼԱՆԷՆ, Պատ. Յ. Կիւրլէկեանի գրութենէն կը քաղենք.—

Ալեքսանդրէթի անկախ սանճագի Բ. Դոմիտէի պատուիրակը Տիւրքիէ և սանճագի կառավարիչը Նոյ. 10ին այցելած են Պէյլան և պատշաճ կերպով դիմաւորուած են տեղին հայ և թուրք երեսելիներէն: Ընդունելութեան առթիւ խնդրոյ առարկայ եղած է Պէյլանի ջուրի խնդիրը: Յայտնուած փափագին վրայ որոշուած է Աթըգէ եկող ջուրը խողովակներով քաղաք փոխադրել, որուն համար 3000 օսմ. ոսկի ծախք հաշուած են: Բժիշկի մը անհրաժեշտութիւնը յիշուելով հիւրերը խոստացած են 1933ի օկտոբէն օկտեալ 300

սուրիական ոսկի յատկացնել այս նպատակի համար: Սոսակցութեան նիւթ եղած է նաեւ ելեկտրական լոյսի պէտքը և անոր գոհացման կարելիութիւնը:

ԷՋՄԻՍՄՆԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ ՄԷՋ, Նոյ. 12ին, Տեղակալ Տ. Սորէն Արք. Մուրաթէկեան Ամէն. Հայոց Կաթողիկոս ընտրուած և օծուած է: Այս ժողովին մէջ կարգ մը շրջանակներ չկրցան իրենց ներկայացուցիչները ունենալ, ի մէջ այլոց, Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, Երուսաղէմի և Կ. Պոլսոյ պատրիարքութիւնները, Յունաստան և այլն:

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Ս. Յակոբայ վանքին մէջ՝ Կիւրլէկեան Մատենադարանի շինութիւնը աւարտած ըլլալով անոր բացման հանգէսը եղած է Հոկ. 23ին: Մատենադարանի ճակտին լայնքն է 18 մէտրը, խորութիւնը 23 մէտր և բարձրութիւնը 10 մէտր. ունի ութ սենեակներ և միւլէի յատուկ սրահ մը: Մատենադարանի ընդհանուր շինութեան ծախքը եղած է 7025.491 Պաղ. ոսկի: Մատենադարանս շինուած է Տ. Եղիշէ Պատրիարք Դուրեանի յիսնամեայ քահանայութեան յորեկեանի առթիւ:

ԹԵՐԹԵՐԸ կը գրեն թէ ներգաղթի Ե. կարաւանը պիտի վերսկսի Դեկտ. 1ի սկիզբը և պիտի մասնակցին 100 հոգի ֆրանսայէն, 350 հոգի Յունաստանէն 250 հոգի Պուլկարիայէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ Լէնինական քաղաքը պիտի շինուի հսկայ շաքարի գործարան մը, 10 միլիոն ռուպլի ծախքով, որ պիտի աւարտի 1934ին:

ՀԱԼԷՊ Նոյեմբերի երկրորդ շաբաթը Հայ Առաք. Քառասուն Մանկանց Եկեղեցւոյ վերաշինութեան երեք հարիւրամեակի հանդիսութիւնը կատարուեցաւ: